Երկրորդ տարի № 29 Յուլիսի 17 1883

ԱՐՁԱԳԱՆՔ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԹԱՒԹԱԹԵՐԹ

ԴՈՒՐՍ Է ԳԱԼԻՍ ԿԻՒՐԱԿԻ ՕՐԵՐԸ

Տարեկան բաժանորդագինն է հինգ րուբլի: Բաժանորդագրութիւնն ընդունվում է «ԱՐՁԱԳԱՆՔԻ» Խմբագրատանը և Կենտրոնական Գրավաճառ անոցում: Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ. Редакція „Арцаганкъ“.

Առանձին համարները 10 կ. Յայտարարութիւնների գաւթին 2 կ.

«ԱՐՁԱԳԱՆՔ»ԻՆ

կարելի է ստորագրուել և 6 ամսով, նեբկայ յուլիսի 1-ից մինչև յունվարի 1-ը 1884 թ. 6 ամսուայ բաժանորդագինն է 3 րուբլի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայոց եկեղեցական թէմերը և վիճակները: Նախ մենք մեր աչքի գերանը հանենք:—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Կաթողիկոսական յանձնաժողով: Իգալական ուսումնարանի ուսումնասիրաբար աշակերտները: Կոմս Լօռու Մելիքեան: Ս. Ղազարու վանքի հրդեհը: Ախալքալաքեցու դատողութիւնները“: Թատրոնին օժանդակութիւն: Մի նոր ամենօրեայ լրագիր: Ընդհ. Ուս. Ժողովի կ. ցանկ. կողմից:—ՆԱՄԱԿ Կ. ՊՕԼՍԻՑ: Կ. Պօլսից լուրեր:—ՖԷԼԻԷՏՕՆ: Նամակ Փարիզից: Մեծ Ղազարաքելեան գործագործութիւնը:—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԹԻՄԵՐՆ ՈՒ ՎԻՃԱԿՆԵՐԸ

IV

Ընդհանուր հայ ազգի մեծագոյն մասը գտնվում է այսօր Թիւրքիոյ Հովանաւորութեան ներքոյ: Այդ տերութեան հայք, իրանց բազմաթիւ վիճակներովը, երկու կաթողիկոսներովը և երկու պատրիարքներովը, դարևոր փորձառութիւնից յետոյ՝ մի այնպիսի եկեղեցական վարչութիւն են կազմակերպել, որ միանգամայն տարբեր է Ռուսաստանի հայոց հոգևոր վարչութիւնից: Ոչ Տաճկաստանի հայ առաջնորդութիւնն է նման մեր վիճակաւոր առաջնորդութեանը, ոչ Կ. Պօլսոյ և Երուսաղէմի պատրիարքներն են նման մեր թէմակալներին և ոչ Սսոյ կամ Աղթամարայ կաթողիկոսութիւնքը—Ս. Էջմիածնի կաթողիկոսութեանը: Շատ ժամանակ չէ անցել այն օրից, երբ վերոյիշեալ երկու կաթողիկոսները և երկու պատրիարքները Թիւրքիոյ մէջ միմեանցից բոլորովին անկախ դերք ունէին բռնած և իրրև առանձին մարմիններ էին նկատվում: Ս. Էջմիածնի Մայր Աթոռի իրաւասութիւնը Թիւրքիոյ հայոց վերայ այդ միջոցում շատ սահմանափակ էր. Սիսը և Աղթամարը չէին ճանաչում Ս. Լուսաւորչի յաջորդին, իսկ Կ. Պօլսոյ և Ս. Երուսաղէմի պատրիարքների վերաբերութեամբ ընդհանուր հայոց կաթողիկոսը բաւականանում էր լոկ օրհնութեան կոնդակներով: Մի շարք կաթողիկոսներ բարձրանում են Ս. Գրիգորի գահը ու Թիւրքիոյ հայք ոչ մասնակցում են դոցա ընտրութեանը, ոչ յիշատակում դոցա անունը եկեղեցեաց մէջ:

Այսօր Տաճկահայոց եկեղեցական վարչութիւնը տարբեր եղանակաւ է մեզ ներկայանում: Այդ վարչութիւնը ամբողջապէս կեդրոնացած է Կ. Պօլսոյ «Ազգային Ժողովի» ձեռքին, որ մի սահմանադրական մարմին է: Այդ Ժողովը ներկայացնում է ամբողջ Թիւրքիոյ հայ ազգը և օրէցօր աշխատում է գումարել իւր ձեռքին այն իշխանութիւնը, որ առաջ ցրուած էր վանահայրերի, առաջնորդների, կաթողիկոսների և պատրիարքների ձեռքին: Ժողովը սահմանափակեց նաև Կ. Պօլսոյ պատրիարքի առաջուայ անհատական իրաւունքները: Նոյնը արաւ նա գաւառական առաջնորդների վերաբերութեամբ: Հետզհետէ գաւառաց մէջ սահմանադրութիւնը հաստատելով, ամէն տեղ ընտրուեցին հոգևորական և աշխարհական անձանց այն ժողովները, որ կազմում են գաւառական վարչութիւններ և ստորագրվում կեդրոնական իշխանութեանը: Այդպէս ահա Կ. Պօլսոյ «Ազգային Ժողովը» ամենայն իրաւամբ ներկայացնում է այսօր Թիւրքիոյ մէջ գտնուղ ամբողջ հայ ազգը և վարում է իւր գործը

համաձայն տէրութիւնից հաստատուած «սահմանադրութիւն» անուանեալ կանոնադրութեան։

Եթէ հիմայ ՚ի մօտոյ քննենք առաջնորդների մեզ զբաղեցնող դրութիւնը, կը տեսնենք, որ ըստ սահմանադրութեան 1862 թուի՝ Կ. Պօլսոյ Ազգային ընդհանուր ժողովը բաղկանում էր 140 երեսփոխաններից, որոնցից միմիայն 40 ը ներկայացնում էին Թիւրքիոյ բազմաթիւ հոգևոր վիճակները, իսկ 80 ը մայրաքաղաքի թաղերից ուած երեսփոխաններն էին։ Միևնոյն ժամանակ թեմերի և առաջնորդների թիւը համարւում էր 53, որ ասել է թէ առնուազն 14 առաջնորդ զուրկ պիտի լինէին Ազգային ժողովի մէջ իրանց ներկայացուցիչը ունենալու իրաւունքից։ Այս ակներև անարդարութիւնը կարելոյն չափ վերացաւ, երբ ըստ վերաքննեալ սահմանադրութեան՝ Պօլսոյ թաղերի և գաւառական թեմերի երեսփոխանաց թիւը համահաւասար քառասնական հոգուց բաղկացաւ։ Այս փոփոխութեան հետ միասին հարկաւոր եղաւ քչացնել հոգևոր թեմերի թիւը ու 53-ից հասցնել դոցա մինչև 20, տալով դոցա երկու երկու երեսփոխան—ներկայացուցիչներ ունենալու իրաւունք։ Այս 20 թեմերը կոչուեցան արքեպիսկոպոսական վիճակներ, ունենալով ամէն մէկը իրանց իրաւասութեան տակ քանի մի եպիսկոպոսական կամ փոխառաջնորդական աթոռներ։ *)

Ըստ սահմանադրութեան՝ առաջնորդը գաւառական ժողովոյ նախագահն է և նոյա գործադիր իշխանութիւնը կը վարէ։ Գաւառաբնակ Օսմանցի Հայոց պաշտօնական հոգևոր պետը լինելով, առաջնորդը պատրիարքի հեղինակութիւնն է ներկայացնում գաւառին հետ ունեցած յարաբերութեանց մէջ և պատասխանատու է թէ գաւառի և թէ կենդրոնական վարչութեան առջև։ Նա նոյն ձևով է ընտրւում, ինչպէս որ Կ. Պօլսոյ պատրիարքը, բայց նորա ընտրողը ոչ Ազգային ընդհանուր ժողովն է, այլ գաւառական ժողովը։ Հրաժարման և առհասարակ պաշտօնին վերաբերեալ միւս պարագայից մէջ՝ առաջնորդը նոյն կանոններովն է վարւում, ինչ որ պատրիարքը և այս կանոնները մեկ առ մեկ յիշուած են սահմանադրութեան մէջ։

---

*) Թիւրքիոյ Հայոց առաջնորդ 53 գաւառական առաջնորդանիստ տեղերն էին՝ 1.) Ակն, 2.) Աղթամար, 3.) Ամասիայ, 4.) Ադրիանապօլիս, 5.) Առանա, 6) Արապկիր, 7.) Արգնի, 8.) Արմաշ, 9.) Բաբիլոն, 10.) Բալու, 11.) Բաղէշ, 12.) Բերիա. (Հալէպ), 13.) Դերջան, 14.) Երզնկա. 15.) Եւդոկիա, 16.) Եօզղատ, 17.) Զմիւռնիա, 18.) Թգիլրդաղ. 19.) Լիմ, 20.) Խարբերդ, 21.) Խարբերդու Գուլէի վանք, 22.) Կարին, 23.) Կարս, 24.) Կեսարիա, 25.) Կեսարիոյ Գանիկէլի վանք, 26.) Կիւրին, 27.) Կոստց անապատ. 28.) Հաճին, 29.) Հասանգալէ, 30.) Ճանիկ, 31.) Մալաթիա, 32.) Մարաշ, 33.) Մշոյ վանք, 34.) Մուշ, 35.) Մօլոս-Վալաքիա, 36.) Նիկոմիդիա, 37.) Շապին Գարահիսար, 38.) Շնքուշ, 39.) Չարսանճաք, 40.) Պալըքէսէր, 41.) Պայազիտ, 42.) Պէճէնիկ, 43.) Պրուսա, 44.) Սղերդ, 45.) Սեբաստիա, 46.) Վան, 47.) Վառնա, 48.) Տիվրիկ, 49.) Տրապիզոն, 50.) Քէմախ, 51.) Քէօթահիա, 52.) Քղի և 53.) Ֆըլնուզ։

Ներկայիս Արքեպիսկոպոսական թեմերն են՝

Գաւառ	առաջնորդանիստ տեղ	Քիւ- երեսփոխանաց
1.) Թրակիա. (Թէքիրդաղ, Կալիպօլիս, Ֆիլիպէ և այլն)	Էդիրնէ	2
2.) Դանուպեան (Շումլա, Ռուսճուք, Ռումանիա և այլն)	Վառնա	2
3.) Պոնտոս (Սինոպ, Սամսօն, Կերասօն Նէոկսար, Շ. Գարահիսար և այլն)	Տրապիզոն	2
4.) Շերակ (Բալթում, Արդվին, Շօրագէլ, Ալաշկերտ, Պայազիտ և այլն)	Կարս	2
5.) Բերբական (Բայբերդ, Սալոր, Թօրթում, Երզնկայ, Դերջան, Կամախ, Քղի և այլն)	Կարին	2
6.) Սեբաստիա (իւր թեմերովը)	Սեվազ	2
7.) Ամասիա (Թօքադ, Մարսուան և այլն)	Ամասիա	2
8.) Գաղատիա (Եոզկատ, Չորում և այլն)	Էնգիւրի	2
9.) Նիկոմիդիա (իւր թեմերովը)	Իզմիտ	2
10.) Ուլիմլեան (Քիւթահիա, Պալըքէսէր, Պանդրմա, Չանաքքալէ և այլն)	Պրուսա	2
11.) Զմիւռնիա (Մանիսա, Պէրկամայ, Ա. Գարահիսար և այլն)	Իզմիր	2
12.) Կապադովկիա (Բալաս, Կեմերքէկ, Նիկտէ, Քօնիա և այլն)	Կեսարիա	2
13.) Կիլիկիա (Կոկիսոն, Հաճին, Սիս, Տարսոն, Մերսին, Կիպրոս)	Ատանա	2
14.) Ուլնիա (Անթափ, Զէյթուն, Ֆռնըզ և այլն)	Մարաշ	2
15.) Հաշտեան (Ակն, Արաբեր, Տիւրնիկ, Մալաթիա, Զմշկածագ, Բալու և այլն)	Խարբերդ	2
16.) Տարօն (Պիթլիս, Սղերդ և այլն)	Մուշ	2
17.) Վասպուրական Վան (իւր թեմերովը)	Վան	2
18.) Միջագետա (Եդեսիա, Մէրտին և այլն)	Տիգրանակերտ	2
19.) Երուսաղէմ (Սուրբիա և Բաղդատ)	Սաղիմ	2
20.) Եգիպտոս (Ալէքսանդրիա)	Կայիր	2

40 երեսփոխանք։

Այս թեմերից շիրակը, ինչպէս յայտնի է, այլ ևս չէ պատկանում Տաճկաստանին։

Բայց Թիւրքիոյ հայ առաջնորդները ոչ միայն ներկայանում են իբրև հոգևոր հովիւ և տեսուչ, կամ իբրև ազգային պաշտօնեայ և նախագահ գաւառական վարչութեան, այլ նաև իբրև Թիւրքիոյ պետութեան պաշտօնեայ, տեղական կառավարութեանց հետ անդադար յարաբերութիւն ունեցող։ Այս է պատճառը, որ Բ. Դուռը առաջնորդաց ընտրութիւնը ամէն անգամ հաստատում է առանձին ֆիրմանով և հրամայում է տեղական կառավարութեանը ճանաչել նորան հայ մ իլ լ է թ ի պաշտօնական ներկայացուցիչ։ Դառնալով տեղական կառավարութեան և գաւառի ազգայնոց մէջ յարաբերութեանց մէջնորդ նոյն տեսակ, ինչպէս Պօլսոյ պատրիարքը Բ. Դրան հետ ամբողջ հայոց համար, առաջնորդը իրաւունք չունի ոչ Բ. Դրան հետ ուղղակի բանակցելու ոչ էլ իրանց վիլայէթից դուրս տեղական կառավարութեանց հետ յարաբերութիւն հաստատելու։ Բայց երբ որ Բ. Դուռն դիմելու հարկ լինի, պարտական է նա 'ի պատրիարքարան դիմել, նոյնպէս ուրիշ վիլայէթի կառավարութեան հետ բանակցիլ՝ նոյն վիլայէթի առաջնորդի ձեռքով։

Տաճկաց տէրութեան «Դիւստուր» անուանեալ օրէնսդիրքը մէկ առ մէկ որոշում է, թէ հպատակ ազգաց հոգևոր գլուխները ի՛նչ պաշտօն ունին Թիւրքիոյ դիւանատանց մէջ։ Այդ օրէնքները հաստատուած են 1873 թուի յուլիսի 20-ին։ Համաձայն այդ օրինաց՝ ամբողջ վիլայէթի ամենաբարձրագոյն դիւանատան մէջ (Մէճլիսի—Իդարէ—վիլայէթի այսինքն վիլայէթի կառավարութեան խորհուրդը), ուր անձամբ նախագահում է վալին, անդամ է նաև հայ առաջնորդը։ Այդտեղ նա հոգս է տանում վիլայէթի բարօրութեան համար, հարկերը ժողովելու, եկամուտները շատացնելու, երկիրը հանգիստ պահելու մասին։ Նա հսկում է, որ Բ. Դրան հրամանները ճշտութեամբ կատարուին, քննում է մահուան դատապարտուածների վճիռը, զօրքերի տեղափոխութեանց կարևորութիւնը, քրիստոնէութիւնից մահմետականութեան դառնողների գործը և այլն և այլն։ Միով բանիւ նա տէրութեան մի բարձրագոյն պաշտօնեայ է, որ խառնվում է քաղաքական տեսչութեան մէջ, ուր ձայն է տալիս և վճիռներ կայացնում։ Այդպիսի դիրք ունենալով վալիի առաջ, առաջնորդը պիտի հոգ տանի, որ համաձայն Թ ա նզ ի մ ա թ ի խոստման՝ իւր ժողովրդի կենաց, ընչից և պատուոյ ապահովութիւնը ոչ ոք կարողանայ խանգարել։ Հակառակ դէպքում՝ եղելութիւնը իւր գաւառական ժողովի մէջ քննելուց յետոյ, նա գրաւոր հաղորդում է (թագրիր) կառավարութեանը և բաւականութիւն պահանջում։ Տաճկական դիւանատանց հետ այս տեսակ յարաբերութեանց համար՝ առաջնորդին իրաւունք է տուած ունենալ իւր մօտ մի պաշտօնեայ դ ա փ ո ւ ք ե հ ե ա ս ի անունով, որ անդադար հոգս է տանում հայ հպատակների գործը կամ դատը յառաջ ընթացնելու զանազան պաշտօնատանց մէջ։

Այս բոլորը ցոյց է տալիս, թէ որքան փափուկ և վսեմ դիրք են ստացել Թիւրքիոյ հայ առաջնորդները վերջին ժամանակներում։ Բայց նոքա այդ նշանակութիւնը չէին ունենալ, եթէ թէմերի թիւը չլինէին քչացրած ու ամփոփած։ Այստեղ շատ ենք ցոյց տալ և միւս օգուտը, որ յառաջ եկաւ վիճակների նոր բաժանմունքից։ Այսօր Սսոյ և Աղթամարայ կաթողիկոսները անուանով միայն կան, բայց իսկապէս նոքա մի մի առաջնորդներ են իրանց ժողովրդով հանդերձ՝ ստորադրուած Կ. Պօլսոյ Ազգային վարչութեանը։ Նոքա, ինչպէս և միւս առաջնորդները, ընտրվում են իրանց ժողովրդից, բայց Պօլիսը կարող է և չը հաստատել ընտրութիւնը։ Նոքա իրաւունք չունին բանակցելու Բ. Դրան հետ առանց պատրիարքի։ Նոցա դէմ եղած բողոքները քննում է և վճիռ է կայացնում Ազգային ժողովը։ Եւ այսպէս սոսկ անունով մնացած կաթողիկոսների վիճակները այսօր միացած են Թիւրքիոյ մնացած հայերի հետ։ Նոյնը պէտք է ասենք և Ս. Երուսաղէմի պատրիարքութեան մասին, որ այսօր իբրև մի գաւառական թէմ է նկատվում և Պօլսոյ վարչութեան իրաւասութեան տակն է։

Այդպէս ահա առանց զէնքի մի շարք թէմեր նուաճելուց յետոյ՝ Կ. Պօլսոյ ազգային վարչութիւնը կեդրոնացրեց իւր մէջ ամբողջ Թիւրքիոյ հայոց։ Բայց որովհետև այդ վարչութիւնը և իւր պատրիարք նախագահը պատկանում են Ս. Էջմիածնի գերագոյն հոգևոր իշխանութեանը, այդ պատճառաւ անջատուած համարուած կաթողիկոսական թէմերը նմանապէս անուղղակի կերպիւ ստորադրվում են այսօր ընդհանուր ծայրագոյն հայրապետի գերիշխանութեանը։

Գանք հիմայ Կ. Պօլսոյ ազգային վարչութեան և նորա պատրիարքի յարաբերութեանցը Ս. Էջմիածնի հետ։ Ի՞նչ է Կ. Պօլսոյ պատրիարքը։ Ըստ սահմանադրութեան, որ հաստատած է Բ. Դուռը, չհշեալ «պատ«րիարքը գլուխ է իւր ազգին և մասնաւոր պարագա«ների մէջ՝ տէրութեան հրամանաց գործադրութեան միջնորդ»։ Նա նախագահ է բոլոր ազգային ժողովոց և սոցա գործադիր իշխանութիւնն է վարում։ Ազգային ժողովին իրաւունք է տուած ընտրել պատրիարքին, նա և հարկ եղած ժամանակը դատել և հրաժարեցնել նորան և այլն և այլն։ Եւ այսպէս մի շարք կանոնադրով որոշուած են Կ. Պօլսոյ պատրիարքի թէ իրաւունքները և թէ պարտականութիւնները։ Այդ սահմանների մէջ են ճանաչում նորան թէ Թիւրքիոյ հայք և թէ տէրութիւնը։ Սակայն պատրիարքը Հայաստանեայց եկեղեցւոյ վարչութեան առաջ սոսկ մի վիճակաւոր արքեպիսկոպոս է, ոչ աւելի ,և այս կէտից նա ոչինչ առաւելութիւն չունէ միւս թէմերի արհիներից։ Այսպէս է ճանաչում նորան Ս. Էջմիածինը և այս հիման վերայ պիտի կայանան Ս. Էջմիածնի և պատրիարքի յարաբերութիւնները։ Բայց այդ յարաբերութիւնները տակաւին շատ պարզ չեն . . ։

ՆԱԽ ՄԵՆՔ ՄԵՐ ԱՋՔԻ ԳԵՐԱՆԸ ՀԱՆԵՆՔ

Հակառակ այն ամենահին վարդապետութեանը, որ պատուիրում է մարդուս նախ իւր անձը ճանաչել, հակառակ քրիստոսաւանդ պատուէրին, որ խրատում է մեզ նախ մեր աչքի գերանը հանել, մարդիկ կարծես միշտ և միշտ տրամադիր են դատափետել ուրիշներին, պախարակել այլոց պակասութիւնները, խոշորացնել նոցա թերութիւնները չափել ու ձևել նոցա գործելու եղանակը՝ ընդհանրապէս պակասութիւն գտնելու նպատակով, և այդ ամէնի հետ միշտ մոռանալ իրանց անձը, չը յիշել իրանց պարտականութիւնները, քողարկել սեպհական արարները: Սա մարդկային թերութիւններից մինն է, որ շատ անգամ անհատներից անցնում է ամբողջ դասակարգի, ամբողջ հասարակութեան, մինչև իսկ ամբողջ ազգութեան:

Վերջին տարիներիս ընթացքում մենք, ռուսաստանցի հայերս, օրինակ, շարունակ սկսել ենք պախակել մեր տաճկաստանցի եղբայրակիցներին, արհամարհական ակնարկ, նախատական խօսքեր արձակել դէպի նոցա, անգործութեան, անհեռատեսութեան և թերեւամտութեան մէջ մեղադրել նոցա:

Նայեցէք. Եւրոպայում քաղաքական հանգամանքներն ուրիշ կերպարանք ստացան, հայկական հարցը մոռացութեան տրուեցաւ, և ահա մենք, առանց պատճառները քննելու, առանց ներքին հանգամանքներին և կողմնակի ճնշումներին տեղեակ լինելու, աղաղակ ենք բարձրացնում, թէ Կ. Պօլսի հայ—գործիչները անընդունակ են, թերեւամիտ են, անհարազատ են:

Տաճկահայոց արժանաւոր պատրիարքը՝ ստիպուած բարձրագոյն Դրան ճնշումներից և ուրիշ բազմաթիւ ներքին ու արտաքին պատճառներից, բազմաթիւ բողոքագրեր ուղարկելուց, իւր հօտի համար սորանից ու նորանից արդարադատութիւն խնդրելուց և իւր բոլոր ջանքերն ունայն ու տպարդիւն տեսնելուց յետոյ, լաւ է համարում հրաժարիլ, որպէս զի տեղիք չ'տայ շատերին պնդելու, որ այդ ամէն ճնշումներն ու հալածանքները իւր անձի պատճառով է: Պատրիարքը հրաժարւում է մի պաշտօնից, որի համար սակաւ առաքինիները ամենայն ինչ պատրաստ են զոհել, և ահա մենք մեղադրում ենք Ազգային ժողովը, մեղադրում ենք պատրիարքին, որ պատրաստ է ձանձրացնել մեզ իւր հրաժարականներով. առաքինութիւնն ու պարտաճանաչութիւնը դատապարտում ենք:

Վարագոյրը փոխւում է. երկար, անիշխանական ամիսներից և տարիներից յետոյ, պատրիարքը հարկադրւում է վերադառնալ և բռնել իւր թողած գահը. բայց երբ նա յայտարարում է, թէ մի տարի գոնէ փորձ պիտի անի հաշտ ապրիլ կառավարութեան հետ, երբ նա ընդունում է արքայատուր պարգևները, որոնց չի կարող մերժել, առանց նուիրողի վեհապետական անձնասիրութիւնն ու բարկութիւնը գրգռելու, մենք այստեղ ևս չենք վարանում արձակել մեր շանթերը և փոխանակ պարագաները քննելու, սկսում ենք կասկածել նոյն իսկ պատրիարքին:

Եւ այսպէս, ամենայն քայլափոխում Տաճկաստանի հայը, նորա ազգային ժողովը, նորա երիտասարդութիւնը, նորա առաջնորդները, նորա պատրիարքը մեղաւոր են մեր առաջ: Կարծես թէ նոքա ոչինչ չեն արել, կարծես թէ Տաճկահայոց ներքին ինքնավարական սահմանադրութիւնը մենք ենք խմբագրել և մենք ենք հազար և մի չարչարանքներով այդ արտօնութիւնն ստացել. կարծես թէ հայաբնակ նահանգների ինքնավարութեան սկզբունքը մենք մտցնել տուինք միջազգային դաշնագրերի մէջ. կարծես թէ մեր վարդապետներն ու եպիսկոպոսներն էին, որ յաճում էին եւրոպական պետական անձանց դռներում իրանց հօտի համար արդարադատութիւն, իրաւունք, մարդավարի կենցաղավարութիւն խնդրելով, կարծես թէ մենք կրեցինք մեր մէջքին արհեստական հրդեհների, սուի, բանտարգելութեանց, կալանաւորութեանց և հազար ու բիւր տառապանաց, պատերազմական արհաւիրքների, վարչական հարստահարութեանց և վայրենի ասպատակութեանց հետևանքները:

Տաք տեղը նստած, համեմատաբար աւելի բարեյաջող հանգամանքների մէջ, հեռուից հեշտ է դատապարտել դիմացինին, քննութեան ենթարկել նորա արարքը կծու ակնարկութիւններով. բայց սա դեռ ևս մեզ իրաւունք չի տալիս մոռանալ մեր սեպհական անձը, մեր պարտականութիւնները դէպի նոցա, մեր ներքին գործերի, մեզ անմիջապէս վերաբերեալ հարցերի տարտամ, համրընթաց և մինչև իսկ անշարժ դրութիւնը: Կարելի է քննադատել դիմացինին, բայց դորա հետ և դորանից առաջ պէտք է մենք մեր անձը ճանաչենք, մեր աչքի գերանը հանենք:

Անձնաքննութիւնը, որի անունով մենք դատափետում ենք մեր եղբայրակիցներին, առ այժմ ամենից աւելի մեզ է հարկաւոր: Մինչդեռ ամենայն բան, որ մեր մասնաւոր շահին, մեր ե ս ի ն չի վերաբերում, նա մեզ չի էլ հետաքրքրում: Հրապարակ է գալիս եսը, դիպչում են մեր շահերին, տեղից շարժում են մեզ, մենք վրդովւում և այնպիսի աղաղակ ենք բարձրացնում, որ լսողը կարծում է, թէ երկինքը ահա պիտի կործանուի մեր գլխին: Հանգիստ թողնէք աղաղակողի եսը, ամենայն բան կը վերջանայ, ամենայն ինչ իւր հին, գուցէ շատ վատ, շատ փխած և շատ ապարդիւն ճանապարհով կերթայ, բայց կեղծ ճշմարտութեան անունով շանթեր արձակողներ չէին լինիլ: Սա է ահա մեր առաւելութիւնը, մեր ինքնաճանաչութիւնը, որով պարծենում ենք:

Եւ ցաւալին այն է, որ մեզանում արդարն ու մեղաւորը, դատապարտողն ու դատապարտեալը միապէս աղաղակ են բարձրացնում, այնպէս որ իրականութեանն

անճանօթ ընթերցողը շատ անգամ չի կարողանում իմանալ թէ ո՛վ է մեղադրողը և ո՛վ մեղադրվողը. դերերը փոխվում, խառնաշփոթվում են։

Վեր առնենք հէնց մի խնդիր, և ապացուցանենք, որ արդարև շատ անգամ ամենատանիրաւ կերպով կարող են փոփոխուիլ դերերը և մեղադրողներին մեղադրեալների վիճակի մէջ ձգել։ Վեր առնենք ներկայումս մեզ ամենից զբաղեցնող կաթողիկոսական խնդիրը. ինչ որ մենք գիտենք, այն ասենք, ինչ որ կարդում ենք թէ լրագիրներում, թէ առանձին տետրակներում և թէ ամսագիրներում, այն ընդունենք որպէս հաստակաց կարծեաց և այս կամ այն գլխաւոր կենդրոնների հայեացքների և կարծիքների արտայայտութիւն։

Մի բան՝ որ մենք ունինք, մեր ներքին, պատմական ժառանգութիւնը, դա Հայոց ազգի կաթողիկոսական գահն է։ Այդ գահի ընդհանրական գահակալը մեր հոգևոր Հայրն է, մեր կրօնական առաջնորդը և բարոյական ղեկավարը։ Մեր բարեկեցութեան, մեր հոգևոր երաիխայի բարւոքումը անմիջական առընչութիւն ունի նորա հետ։ Այս գիտենք ամենքս։ Գիտենք և այն, որ հետևապէս մեզանից իւրաքանչիւրը օրինական մասնակցութիւն կարող է ունենալ և պիտի ունենայ իւր վեհապետի ընտրութեան մէջ։ Բայց կաթողիկոսի ընտրութիւնը նախ և առաջ պիտի զբաղեցնի Էջմիածնի Սինոդին և Ռուսաստանի Համայն Հայ կղերին. նորանով պիտի զբաղի ամբողջ Հայ Հասարակութիւնը իւր առաջնորդող ուժերի ձեռքով, որովհետև նորանից էլ աւելի իւր սրտին մօտիկ խնդիր չունի, նորան պիտի պարզաբանէ պարբերական մամուլը։

Բայց ինչ...

Էջմիածնայ Սինոդը մինչև այսօր ոչինչ կարգադրութիւն, ոչինչ տնօրէնութիւն արած չունի. նա, ինչպէս տեղեկանում ենք, մինչև անգամ վերջնականապէս մտածած չունի, թէ ո՛վ է իւր ընտրելին. նա չ՛գիտէ, թէ ո՛ւմ համար պիտի աշխատի, ո՛ւմ պիտի պատկանի իւր ձայնը, իրան դիմողին, իրան հեղինակութեանն ապաւինողին ինչ պիտի ասի։ Սինոդի օրգանը մինչև այսօր ոչ մի առաջաւոր յօդուած, ոչ մի լուրջ գրութիւն, ոչ մի բացատրական խօսք չ՛նուիրեց այդ խնդրին. կարծես թէ մեր կրօնական — ազգային ամսագրի համար այդ հարցը դեռ ևս չի ծագել, չի սկսուել։

Հասարակութիւնը, ժողովրդեան մեծամասնութիւնը, ընդհանրութիւնը, որպէս ճիշտ անդրադարձութիւն հոգևորականութեան, նոյնպէս չի հետաքրքրվում այդ հարցով. նորա համար այդ խնդիրը չ՛կայ և չի էլ կարող լինել. ո՛վ է նորան քարոզում, վարդապետում, ո՛վ է նորան իւր իրաւունքները, իւր պարտականութիւնները բացատրում, հասկացնում։...

Բայց ցաւալին այն է, որ այդ խնդրի վերաբերութեամբ սառն և անտարբեր դիրք է բռնում նոյն իսկ մեր առաջաւոր, կրթուած դասը, նոքա, որոնց մենք սովոր ենք ինտելիգենցիայ անուանել։ Ո՞րտեղ են տպվում նորա լուրջ և մտածուած յօդուածները, ի՞նչ գրքոյկներ, կենսագրական տետրակներ ունի նա հրատարակած մինչև այսօր, և վերջապէս ե՞րբ արձագանք տուեց նա մամուլի հրաւէրին՝ համախոսաբար յայտնել իւր կարծիքը այս կամ այն ընտրելիի վերաբերութեամբ։ Երբէք և ոչ մինը չի կատարել նա։

Եթէ մի բան արել է և անում է, եթէ մի գործօն դեր ուզում է ցոյց տալ այդ խնդրում, դա մեր մամուլն է։

Մեզ պէս չի վարվում Կ. Պօլիսը, մեզնից դատապարտուող և պախարակուող ազգային ժողովը, Պօլսի լրագրութիւնը, երիտասարդութիւնը, Պատրիարքարանը։ Խնդիրն արծարծուելուն պէս, Ազգային ժողովը և պատրիարքական վարչութիւնը գովելի եռանդով դիմեցին նորա մշակութեանն ու կարգադրութեանը։ Կ. Պօլսի լրագրութիւնը աւելի բացորոշապէս հարց դրեց և չ՛բաւականացաւ մեզ պէս վերացական գաղափարներ յայտնելով։ Կ. Պօլսի երիտասարդութիւնն սկսեց գրել ոչ միայն այնտեղի այլ և այս կողմի լրագիրներում։ Մենք կարդացինք և վրդովուեցանք, վրդովուեցանք և սկսեցինք մեր արշաւանքը նոցա դէմ։ Մեր լրագիրները քիչ մնաց, որ խլեն նոցանից ամենայն իրաւունք այդ գործի մէջ խառնուելու, մասնաւոր մի գրող, առանձին բրօշիւրով, աշխատեց նոցա ձայների իրաւունքը սահմանափակել, իսկ որ ամենից զարմանալին և անսպասելին էր, Արարատ ամսագիրն ևս, որ մինչև այսօր ոչինչ ասած չ՛ունի այս խնդրի մասին, Սուրբ Սինոդի կողմից, երևի, սկսել է իւր յունիսի տետրակում սպառնալիքներ տալ Կ. Պօլսի կաթողիկոսական մասնաժողովին և նորա նախագահին, պահանջելով, որ նա՛ իւր վճիռը օր առաջ լրագրութեամբ հրատարակէ։ — Իսկ եթէ կարևոր չէ, դիւանագիտական կէտից, որ այդ վճիռները օր առաջ յայտնուին, — «Այն ժամանակ, ասում է Արարատը, ազգը կարող է նոյն թերահաւատութեամբ վերաբերուիլ դէպի նա, ինչպէս արեց պ. Ստեփան Փափազեանցը»։ Չէինք կամենալ Արարատին աւելի ծանր հարցեր տալ, չէինք կամենալ լսել նորանից, որ եթէ արդարև ազգը կարող է դժգոհ լինել Կ. Պօլսի կաթողիկոսական մասնաժողովից, որ գործում է, բայց մեզ չի յայտնում, թէ ինչ է վճռում, նոյն ազգը ի՞նչ կասէր սուրբ Սինոդին, ի՞նչ կասէր Արարատին, որոնք չեն գործում, չեն մասնակցում խնդրի պարզաբանելուն, և գործողների վերայ էլ կասկած են գցում. չենք առաջարկում շատ բազմաթիւ հարցեր որովհետև գիտենք, որ մեր հարցերը կը մնան անպատասխան, գուցէ և ապարդիւն. կ՛ասենք միայն, որ Ս. Սինոդը եթէ կամենայ, կարող է գործել, կարող է պաշտօնական յարաբերութիւն պահպանել Պօլսի մասնաժողովի հետ, կարող է պատուէր ուղարկել բոլոր առաջնորդութեանց և յաջորդութեանց, որ նոքա խնդիրը նախապատրաստեն, ծանօթանան հասարակութեան ցանկութեան և տրամադրութեան հետ և իրանց խորհրդա-

ծուԹեան արդիւնքը օր առաջ ուղարկեն Ս. Էջմիածին, որպէս զի ինքը (Սինօդը) կարողանայ, որպէս ճշմարիտ հովիւ և ներկայացուցիչ ազգի, իւր որոշումները յարմարեցնել ազգի, ընդհանրութեան, մեծամասնութեան ցանկութիւններին։

Չ՚շփոթենք դերերը, չ՚դատապարտենք ունայն տեղը ուրիշներին. գործենք, որքան ժամանակը մեր ձեռքին է և արթուն սպասենք փեսայի գալստեանը։ Նախ մենք մեր պարտականութիւնը կատարենք, մեր աչքի գերանը հանենք, ապա կ՚նայենք հանել մեր եղբօր աչքի շիւղը։

Ն.—Տ.—Ղ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«Արարատ» ամսագրի յունիսի տետրակում կարդում ենք հետևեալը. «Որքան Թէ տաճկահայոց և Թէ Ռուսահայոց լրագիրներից տեղեկանում ենք, Կ. Պօլսի ազգային ժողովն ու Պատրիարքարանը զբաղուած են կաթողիկոսական խնդրով. իսկ այդ խնդիրը պարզաբանելու համար կարգուած է մի մասնաժողով Պատրիարք հօր նախագահութեամբ։ Յանկալի էր, որ մասնաժողովի եզրակացութիւնները պարբերաբար հրատարակուէին իգիտութիւն հետաքրքիր հայ հասարակութեան։ Իսկ եթէ մասնաժողովի եզրակացութիւնների տեղեակ լինելու բաղաը միայն վերապահուած կը լինի մասնաժողով կազմող անդամոց՝ իբրև առանձնաշնորհութիւն, այն ժամանակ իրաւունք կունենան ուրիշներն էլ կասկածել այդ մասնաժողովի գործունէութեան մասին, որ սկսուեց մի գժտութեամբ ընդ մէջ յանձնաժողով կազմող անդամոց, որով պ. Ստեփան Փափազեան հրաժարուեց մասնակցելու ժողովին։»

*
* *

18$^{82}/_{83}$ ուսումնական տարուայ վերջում Թիֆլիզի Ռեալական ուսումնարանի Զ. դասատանը կային 60 աշակերտ իսկ Է. դասատանը (Дополнительный кл.) 31 աշակերտ. դոցանից քննութիւններից չեռայ Զից ատեստատ ստացան 31 հոգի որոնցից 14 հայ են, 11 ռուս, 3 վրացի, 2 հրեայ և 1 գերմանացի։ Էից վկայական ստացան նոյնպէս 31 հոգի, որոնցից 18 հայ են, 6 ռուս, 3 վրացի, 2 գերմանացի, 1 հրեայ և 1 լեհացի։

Հայերը որոնք աւարտեցին Զ տղա են՝

1) Իւզբաշեանց Կոստանտին, 2) Գիւլալեանց Տիգրան, 3) Զաքարեանց Բարսեղ, 4) Ղարախանեանց Գրիգոր, 5) Մելիք Բեգլարեանց Եղօն, 6) Տէր—Ստեփանեանց Աբշակ, 7) Նավասարտեանց Յովհաննէս, 8) Թադէոսեանց Աբշակ, 9) Տէր—Մելքայէլեանց Հայկ, 10) Տէր Յովհաննիսեանց Վարդկէս, 11) Զելինդուցեանց Պօղոս, 12) Շահբագեան Սիմէոն, 13) Քելեխսուդեանց Մելքայէլ և 14) Սարդարեանց Մելքայէլ.

Հայերը որոնք ստացան էլ վկայական՝

1) Ալիխանեանց Յովհաննէս, 2) Բաստամեանց Լևոն, 3) Բաբանեանց Աբշակ, 4) Կանդուրալեանց Պօղոս, 5) Ղորղանեանց Վասիլ, 6) Ղորղանեանց Աղեքսանդր, 7) Լիսիցեանց Իսահակ, 8) Լոմիդզէ Գաստար, 9) Սունդուկեանց Յովհաննէս, 10) Թառումեանց Նիկողայոս, 11) Տէր—Աստուածատուրեանց Պօղոս, 12) Խաչատուրեանց Մելքայէլ, 13) Զելինգարեանց Խաչատուր, 14) Բէկ-Նազար—Իւզբաշեանց Բախշի, 15) Խատիսեանց Կոստանտին, 16) Կուզանեանց Մելքայէլ, 17) Զուբալեանց Պետրոս և 18) Տէր— Յակովբեանց Եփրեմ։

*
* *

Ամսոյս 12-ին ճաշից յետոյ ժամը 6-ին գրաֆ Լօռիս Մելիքեանը ժամանեց Թիֆլիս և առանց իջևանելու անցաւ գնաց Կօջոր ամարանոցը։

*
* *

Լրագիրներին հեռագրում են, որ յուլիսի 3-ին վենետիկ կաթոլիկ Հայոց Սուրբ Ղազարու վանքում հըրդեհ է պատահել, բայց, բարեբաղտաբար զգալի վնաս չէ տուել. վանքի Թանկագին մատենադարանը ամբողջապէս ազատուած է։ Մարդիկ ևս չեն վնասուած։

*
* *

„Արձագանքի“ խմբագրութեան մէջ ստացուեցաւ պ. Ռշտունու՝ „Ալեքալաքեցու դատողութիւնները“ անունով գրքոյկը։ Սա մի պատասխան է պ. Խորխոռունու „Ալեքալաքեցու վերքերը“ անունով գրքոյկին. տպուած է Թիֆլիս պ. Մովսէս Վարդանեանի տպարանում։ Գինն է 15 կ.։

*
* *

Յուլիսի 11-ին քաղաքային ժողովարանում քննվում էր Կովկասի կառավարչապետի արծարծած այն հարցը, որ Թիֆլիսը իւր վաղեմի սովորութեան պէս օգնի Թատրոնական ներկայացումներին, տարեկան մի որոշ օժանդակութիւն յատկացնելով նորան, այն է, 6,000 րուբլի։ Ժողովը, հարցը քննելուց յետոյ՝ հետևեալ վճիռը կայացրեց. յատկացնել Թատրոնական ներկայացումների համար 6,000 րուբլի տարեկան նպաստ, միայն այն պայմանով, որ լիշեալ գումարի կէսը յօգուտ տեղական, այն է՝ հայերէն և վրացերէն ներկայացումների գործ դրուի։

*
* *

Տեղական լրագիրները հաղորդում են, որ երդուեալ հաւատարմատար պ. Ստեփանովը իրաւունք է ստացել հրատարակել Թիֆլիսում ամենօրեայ Թերթ „Кавказское Обозрѣніе“ անունով:

„Тифлискій Вѣстникъ“ լրագրի դադարումից յետոյ մի ամենօրեայ անկախ Թերթի կարիքը օր առաւր աւելի և աւելի զգալի էր լինում, և այժմ մենք ուրախ ենք, որ հասարակական պահանջը լրացնելու համար հրատարակ է ծնում մի անձն, որ իւր բոլոր ընդունակութիւնների հետ ունի գրականական փորձառութիւն լրագրական մասի վերաբերութեամբ: Պ: Ստեփանովը մի քանի տարի շարունակ Юридическій Обозрѣнія Թերթի խմբագիրն էր:

*
* *

ԸՆԴՀ. ՈՒՍ. ԺՈՂՈՎԻ Կ. ՅԱՆԶՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ

ՄՈՒՏՔ.

Ղարաքաղու Թէմ (շարունակութիւն)

2) Վարանդ և Դիզակ գաւառակներից		
ա) Թազօ գիւղի եկեղեցուց	2 ր.—	կ.
բ) Վարաղնաբոյն „	3 ր.—	„
գ) Սչան „	3 ր.—	„
դ) Նղոզկի „	4 ր.—	„
ե) Մուշկապատ „	4 ր.—	„
զ) Գելի „	3 ր.—	„
է) Սարուշէն „	2 ր.—	„
3) Նուխի քաղաքից և գիւղերից		
ա) Նուխի քաղաքի Ս. Աճառնայ. եկեղեցուց	20 ր.—	կ.
բ) Կախ գիւղի „ „ „	5 ր.—	„
գ) Հաւարիկ „ „ „	5 ր.—	„
դ) Քեանդակ „ „ „	5 ր.—	„
ե) Խանաւադ. „ „ „	5 ր.—	„
զ) Զանախբուլաղ „ „ „	5 ր.—	„
է) Գրդամիւլ „ „ „	5 ր.—	„
ը) Նիժ գիւղի վերին մահլայի Ս. Աճառնին.	5 ր.—	„
թ) „ „ միջին „ Ս. Եղիշէի	5 ր.—	„
ժ) „ „ ներքին „ Ս. Աճառնայ	5 ր.—	„
ժա) „ „ Ղօջաբէկլու „ Ս. Լուսաւորչի	5 ր.—	„
ժբ) Նջլին Սեօգութլու Ս. Աճառնայ. եկ. . .	5 ր.—	„
ժգ) Նաղուբլու գիւղի Ս. Մինաս „ . . .	5 ր.—	„
ժդ) Թուխեր „ Ս. Աճառնայ. „ . . .	5 ր.—	„
ժե) Զառափ „ Ս. Գէորգայ „ . . .	5 ր.—	„
ժզ) Ղայաբաշի „ Ս. Սահակի. „ . . .	5 ր.—	„
ժէ) Ղօղլու „ Ս. Աճառնայ. „ . . .	5 ր.—	„
ժը) Մաղղ „ Ս. Աճառնայ. „ . . .	5 ր.—	„

Կ. Յանձնաժողովս սահմանած է այսուհետ ընդհատել Ղարաքաղու կոնսիստորիայից ուղարկուած փողերի հաշուետուութիւնը, որովհետև մինչ այսօր չէ ստացել այն եկեղեցիների անուանացուցակը, որոնցից ստացուած է եղել մնացեալ փողերը:

Յաջորդ անգամ տպագրութեան կը յանձնուի Երևանու Թէմից ստացած փողերի հաշիւը, բացի Նոր Բայազիդու և Գառնոյ գործակալութեանց կողմից ուղարկուած փողերի հաշուից, մինչև որ նոցա վճարող եկեղեցիների ցուցակը ստացուի:

Կ. Յանձնաժողովս խնդրում է Շամախու կոնսիստորիայից ևս շտապել եկեղեցիների ցուցակը ուղարկելու:

(կը շարունակուի)

ՆԱՄԱԿ Կ. ՊՕԼՍԻՑ

ԴԱՏԱՍՏԱՆ ԵՒ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԹԻՒՆ

ԿԱՐՆՈՑ ԲԱՆՏԱՐԿԵԱԼ ՀԱՅՈՑ.

1 յուլիս. 83

Իբր Թէ Կարնոյ Նահանգն Օսմանեան իշխանութեանց Հեռքէն կորզելով Հայկական ինքնօրէն գաւառի մը վերածելու դիտումով ամքաստանուած Կարնեցի Հայոց գատաստանն յունիս ամսոյ առաջին շաբթուան մէջ կատարեցաւ երկրորդ անգամ, և վճիռը տեղւոյն եղեռնագատ տեսչին կողմէ տրուեցաւ յունիսի 11 շաբաթ օրն: 56 բանտարկելոց 16-ն անպարտ Համարուելով արձակուեցան, սոսկ են, Զագմագճը Տիգրան, Քէմախսրցի Մարտիրոս, Կրնեցի Նիկողոս, Զիթագործցի Մկրտիչ Կիւրճեան, Զիթագործցի Եփրեմ, Զիֆթլիքցի Սեդրակ, Շէյխզիւղցի Մարտիրոս, Կինհէրեան Յովհաննէս, Զիթագործցի Նարեկեան Մարտիրոս, Ղազարոսեան Յակոբ, Ղազարեան Խաչատուր, Ծիթագործցի Գրուա Աւագեան Թորոս, Պապիկեան Պօղոս, Գաճագեան Մարուքէ, Կիրքիքեան Տիգրան, Գաթըրճի Յարութեան Կարապետ: Միւս 40-ոց մէջէն նմանապէս ազատ Թողուեցաւ պատկերհան Մինքայէլ, որովհետև իւր ընկերաց դէմ մատնութիւն ընելով և անոնց իրական կամ կարծեցեալ դատապրութեան վրայ կատարութեան տեղեկութիւնները տալով, դիւրացուցած էր ամբաստանութեան գործը, նման Իւլանտացի Հանրաձանօթ Cares ին, որ Իւլանտացոց գաղտնի դատապրութիւն երեան հանեց, և Թէպէտ ինք ևս մին եղած լինի դատապրաց, անպատիժ Թողուեցաւ: Այսու ամենայնիւ, պ. Մինքայէլ երկու տարի ոստիկանական հսկողութեան ներքև պիտի գտնուի: Իսկ մնացեալ դժբախտ ազգայինք այլ և այլ պայմանաժամերով բերդարգելութեան դատապարտուած են, և սոսկ են. Կիրքիքեան Թաչատուր, որ այս գատապրութեան գլխաւոր հեղինակը նկատուած էր, 15 տարի բերդարգելութեան, Դիրքքեօր Յովհաննէս և Թիրկիպաշեան Յակոբ՝ 10 տարի. Գունտուրաճը Ալէքսան՝ 7 տարի, Գալոյճը Գալուստ, Օհաննէսեան Շատաբէ, Ժամկոչեան Գալուստ և Գունտուրաճը Մ. Յովհաննէս 6 տարի: Անդին կը մնան 31 անձինք, որք 5 ական տարի բերդարգելութեան դատապարտուած են:

Կարինէն մայրաքաղաքիս լրագրաց ոմանց և յԱգգ. Պատրիարքարան գրուած ընդարձակ նամակները գատաստանին մանրամասնութիւնները կը ծանուցանեն: Գատաստանն հրապարակային էր, և խուռն բազմութիւն ներկայ կը գտնուէր: Ամբաստանելոց պաշտպանութեան համար կառավարութեան կողմէ նշանակեալ փաստաբանք էին Համամճեան Յակոբ էֆէնտի, Թուղլաճեան Տիգրան էֆէնտի և Օսման Ֆայիգ էֆէնտի: Ո՛չ Կարնոյ մէջ ուրիշ փաստաբան կարելի էր գտնել, ոչ ալ խեղճ ամբաստանեալք կրթողութիւն կամ ազատութիւն ունէին դատաքն փաստաբան բերելու: Նախ

և առաջ կը կարդացուի ամբաստանագիրն, որուն նայելով այս Հայերը գաղտնի դատապրութիւն մը կազմեր են Հայաստանի մէջ ընդհօրինուածիւն հաստատելու համար, և որ արդէն ծանօթ է ձեզ: Ապա ընդհ. դատախազ Խմկէթ պէյ կ'ներկայուի ամբաստանագրային պարունակութիւնը: Ի հաստատութիւն ամբաստանութեան վկայները մէջ կը բերուին, համաձայ (բեռնակիր) Յովհաննէս կը վկայէ թէ Կէրէքցեան Տիգրան, Թէզրիպաշը Յակոբի տունէն իրեն ծանր մուտուկ մը յանձնած էր, զոր տուն մը փոխադրեց 26 փարա վարձքով: Դաթըճը (ջորեպան) Յարութիւն կը վկայէ թէ Կէրէքցեան Խաչատուր քաղաքէս դուրս իրեն պայուտակ մը յանձնած էր Վան տանելու համար: Ասոր մէջ կային ծանուցեալ երդմնագրերը, որոնցմով դատապրեր կապուած են իրարու հետ: Գլխաւոր ամբաստանեալը կը հարցաքննուէին. Խաչատուր կ'ըսէ թէ ինք Օսմ. տէրութեան դէմ որևէ դիտում չէ ունեցած, թէ երբ Վան գնացած է և Խրիմեանը տեսած, բայց ոչ այն նպատակաւ որ իրեն կը վերագրուի: Իսկ կազմուած ընկերութեան նպատակն էր ներքին բարեկարգութիւն, որով իրենց անձնական բարուքման պիտի շահատէին, ոգեւից ըմպելիք և ծխախոտ ծախել պիտի հրաժարէին, նմանապէս զգոյշ պիտի կենային անառակութիւններէ, կիւրակի օրերը մէկտեղ հաւաքուելով պիտի կարգային և ղիւրաւ պիտի հրահանգէին, և այլն: Այս միջոցին պատկերահան Միքայէլ կը վկայէ թէ ինք աղքատ մարդ մը լինելով, Խաչատուր, տիրէքթոր Յովհաննէս և Թէզրիպաշը Յակոբ իրեն դրամ տալով քարի մը վրայ տպել կուտային բառնուած երդմնագրերն ու այլ թուղթերը, զորս ուրիշի մը ցրուել կուտան եղեր:

Դատաստանին երկրորդ օրը նմանապէս խուռն բազմութիւն ներկայ էր դատարանին մէջ: Դիւրահասկնալի է որ այնպիսի ծանրակշիռ չանցանօք ամբաստանեալ անձերու դատաստանը նոյն իսկ ասիական ժողովրդի մը մէջ կարի մեծ հետաքրքրութիւն պիտի զարթուցանէր: Աւելորդ է ըսել թէ ներկայից մեծամասնութիւնը հայ էր, բայց իսլամ ժողովրդէն ալ շատ մարդիկ կային, որովհետև Կարնոյ և Հայաստանի ուրիշ տեղերու իսլամք ժամանակէ մ' է վեր սկսած են յոյժ հետաքրքրիլ հայոց գործերուն ու շարժուններուն, և կ'ըսուի թէ հինգ տարիէ աչքով կը նային անոնց, և ուր որ հայք փոքր ի շատէ աղգային ոգի և ինքնապաշտպանութեան ու արժանապատուութեան նախանձախնդրութիւն ցոյց կուտան, հոն իսլամք աւելի յարդանքով կը վարուին այս նախկին սորուկ կէս ազատներու հետ: Այսպէս են իսլամ ժողովուրդ. հզօրի մը կամ հաւասարի մը առջև կը լռեն, իրենց վրէժը լուծելու համար սպասէն ու անպաշտպանէն: Եթէ հայք ցարդ Թուրքիոյ քրիստոնեայ ժողովրդոց ամենէն աւելի հարստահարեալն էին, պատճառն այս էր անշուշտ որ անոնք ամենէն աւելի գլուխ ծռող, հլու, կամակատար և ինքնապաշտպանութեան զգացումէն զուրկ մասը կը կազմէին Բ. Դրան քրիստոնեայ հպատակաց . . . :

Դատաստանին երկրորդ օրը տեղի ունեցած հարցաքննութիւնները կը հաստատուի թէ ամբաստանեալները ոմանք վերոյիշեալ երդմնագրերն ցրուած են Կարնոյ և շրջակայ գիւղօրէից հայոց մէջ, բայց անոնք կը պնդեն թէ իրենց նպատակն չեղափոխական չէր: Անոնք նաև տեղեկութիւն չունին հայկական զինուորագրութեան մը վրայ, ինչպէս երևան հանած լինելու կը կարծէր ընդհ. դատախազը: Ապա փաստաբանք կը սկսին իրենց պաշտպանողական ճառերն: Համամճեան Յակոբ էֆէնտին կը գանգատի թէ դատին վերաբերեալ թուղթերը կառավարութեան կողմէ դատաստանին օր առաջ միայն յանձնուած լինելով փաստաբանաց, ատոնք ժամանակ չեն ունեցած զանոնք քննելու: Երեք փաստաբանք միահամուռ կը պնդեն թէ ամբաստանելոց միայն մէկ քանին նպատակ մը ունենալ կը թուին, որ անմեղ է, իսկ մեծամասնութիւնը, որ արդէն տգէտ է, անտեղեակ կը գտնուի մեւաներուն նպատակին: Ուստի կը ժխտեն գործին եղեռնական հանգամանք մը ունենալը: Իսկ ընդհ. դատախազը կը պնդէ հայկական գաղտնի կազմակերպութեան մը գոյութեան վրայ, որոյ նպատակն յեղափոխական էր:

Դատաստանին վճիռը արտասանելու օրը, բանտարկեալք սմանք լանդրագրեր կը ներկայեն, յորս կարևոր իրողութիւնք երևան կը հանուին: Աւագեան Խաչատուր գրեր է, թէ ինքն տէրութեան դէմ որևէ չարամտութիւն ունեցած չէ, և թէ բնաւ տեղեկութիւն չունի, բայց ոստիկանք գանակոծելով տարած են զինքն 'ի բանտ. Թէզրիպաշեան Յակոբ ծանուցեր է, թէ ինք հարցաքննուած չէ, թէ՝ բնաւ տեղեակ չէ իրեն վերագրեալ գործին, և թէ հակառակութեան արդիւնք են Խաչատուրի, Միքայէլի և Յակոբի կողմանէ իրեն համար ըսուածները: Տիրէքթոր Յովհաննէս ալ մանրամասն նշանակեր է՝ բոլորովին անտեղեակ լինելն: Ընկերութեան հիմնադիրն համարեալ Կէրէքցեան Խաչատուր պատմեր է, թէ ժամանակաւ առևտրական ընկերութիւն մը հաստատելոյ, բայց հարուստներու շահուն դպչելուն պատճառաւ ցրուեցին, և թէ ինք քանի մը անձանց հետ խորհելով աղքատաց վիճակին վրայ՝ իրեն մերձակ մէջոց, ընկերութիւն մը կազմեցին ներքին բարեկարգութիւն անուամբ, օգի չխմելու, գրել կարդալ սովրեցնելու և յոռի գործոց մէջ չգտնուելու պայմանաւ, թէ՝ վախնալով որ հարուստք գործեալ հալրգելեն, գաղտնի պահուեցաւ, և թէպէտ ընկերութեան անդամները երդումնցուցեր են, և գինուորական տանապետ անուններն տուեր է. բայց ակերութեան դէմ չէ լինելով՝ չխեղաւ պատճառէ չառաջ եկած է և ինք վան ու Տփղիս գացած է՝ ըստ որում գազազ (մետաքսավաճառ) է, վաճառք առնելու համար, և երեւեկութեան առնը գիւղացւոց թշուառութիւնն և աղքատութեան մինչև այս աստիճան ընդհանրացած լինելն տեսնելով, ցաւած է, և թէ դժնդակ բանտի (բօլիս) մէջ դրուելով՝ քանի մ'օր անօթի, ծարաւ ու անդրուն մնալուն պատճառաւ խելքը գլուխը գտնուած չէ, և այս վիճակին մէջ հարցաքննուած լինելով՝ չընդունիր հարցաքննութիւնը: Գանձտուրացը Մ. Յովհաննէս գրեր է, թէ ինք դժնդակ բանտի մէջ դրուած, գանակոծուած, ոստիկանի մը կողմանէ ականջն կտրտած է, և որ և է չարամտութիւն ունեցած չէ: Էհրամճը Պալաս բաց յայտըց, յայտարարեր է թէ 35 լիրա պարտք ունենալով, իրեն խօսք տրուեցաւ վճարել զայն կառավարութեան կողմանէ և պատուանշան ընծայել, և այսպէս համոզուելով հարցաքննուեցաւ: Շաւարշ ծանուցեր է՝ թէ ինք երբէք ապստամբական դիտում ունեցած չէ, և թէ՝ անօթի ու ծարաւ պահուելով, և ոստիկան մը վախ տալով թէ գլխէդ հանգիստ չպիտի թողունք, եթէ այս գիշեր 10 մարդոց անունը չտաս, այսպիսի ազգեցութեան ներքև հարցաքննուած է: Գանձտուրացը Ալէքսան ալ խնդրագրով արդարութիւն ու գթութիւն հայցեր է: Ընդհանուր դատախազն այս խնդրագրոց դէմ ըսեր է, „Յայտնի են սոցա առաջին խոստովանութիւնք, կարևորութիւն չը տուրիր այժմեան յայտարարութեանց, դանակոծուիլ և հանգիստ չթողուիլ՝ խնդրել դուրս են, և կրնան երբև ուրիշ դատ մը լինել, ստէպ է պատասխանեցին. Պալաս մինչև իսկ առաջին գրոյն մէջ ըսած է, թէ ա-

ռաջնորդին երթալով ցուցած է երդմնագրերն, և „որովհետև այս թուղթերը տուիք մեզ՝ մեր ապրուստն ալ տուիք ըսեր է“:

Պօլսոյ վճռաբեկ դատարանն ի հարկէ պիտի տեսնէ այս ամեն գրերն: Տակաւին յոյս կայ Թէ կամ խոստ պիտի Թեթևնան արտասանեալ վճիռք, և կամ բոլորովին պիտի արձակուին բանտարկեալք: Ձայն Բ. Դռնէն հաւաստած են Ս. Պատրիարք Հօր: Տեսնենք Թէ այս խոստումն ալ ուրիշ խոստմանց կարգը պիտի անցնի. . .

Կ. Պօլսէց մեզ գրում են:

Հայաստանի և Փոքր Ասիոյ քաղաքներէն մայրաքաղքիս Եւրոպական լրագրոց և յԱզգ. պատրիարքարան գրուած նամակներ ժողովրդային աղքատութեան ու թշուառութեան վրայ ցաւալի տեղեկութիւններ կուտան: Տեղ տեղ արմտեաց զգալի սակաւութիւն մը կը տեսնուի, որով ցորենի և գարւոյ գիները յոյժ բարձրացած են: Նապին — Գարահիսարի բազմահայ քաղաքին մէջ մէկ տարւոյ միջոցին երկրորդ անգամ լինելով մեծ հրդեհ մը ծագած է, և 7—800 հայոց տուներ հրոյ ճարակ եղած են, Նապին — Գարահիսարի ժողովուրդն արդէն կէս առած վիճակի մէջ գտնուիլն յառաջագոյն ծանուցուած էր: Պատրիարքարանն ոչ այլ ինչ կրնայ ընել բայց եթէ թ ա գ ր իբ ն ե ր ուղղել Բ. Դռան:

— Մ ա ս ի ս դադարեալ կը մնայ, որովհետև Էհէմփաշան չ'ուզեց երկու ամսոյ պայմանաժամուն լրանալէն առաջ հրատարակման արտօնութիւն տալ, ըսելով Թէ Մ ա ս ի ս յանցանքն այնչափ մեծ է, որ այս Թեթև պատիժը պէտք է ամբողջապէս քաւէ: Մեր մեծատունք Մ ա ս ի ս քննադատութեանց դէմ վշտացած լինելով, չ'նպաստեցին անոր այս գործին մէջ:

— Ազգ. Երեսփոխանական ժողովոյ և գործադիր վարչութեան միջև յարաբերութիւնք ձգտեալ են այս պահուս, որովհետև երեսփոխանութիւնն համարատուութիւն և հաշուեկշիռ կը պահանջէ, իսկ վարչութիւնը կը յետաձգէ: Երեսփոխանութիւն հաշիւ կը պահանջէ նաև այն մեծատուններէն, որք Ազգին դրամները գործածած են յառաջագոյն: Եթէ այս կրկին խնդիրներն կարևորութիւն ստանան, մտադիր եմ առանձին նամակ մը նիւթ ընել զանոնք:

— Հայաբնակ գաւառաց մէջ բարենորոգմանց կարգադրման խնդրոյն վրայ ամիսէ մը 'ի վեր որ և է լուր չ'կայ ո՛չ Բ. Դռան, ո՛չ ալ Եւրոպիոյ կողմէ:

— Կաթողիկոսական յանձնաժողովը կը շարունակէ իւր աշխատութիւնները, և կը փափաքի գաղտնի պահել զանոնք, մինչև որ եզրակացութեան մը յանգի:

ՓԷԼԻԷՏՕՆ

ՆԱՄԱԿ ՓԱՐԻԶԻՑ

յունիս, 1883

I

Վերադարձս Իտալիայէց:—Փարիզի առաւելութիւնը և հայրենիքի գերազանցութիւնը:—Կորած նամակս և նորա բովանդակութիւնը:—Կրկնումն մի քանի տեղեկութիւններու:—Հայագիտութիւնը Ֆրանսիայում և հայագէտները:—Նոր հրատարակութիւնները հայագիտութեանը վերաբերեալ:—Արևելագէտներու միջազգային ժողովը Հօլանդիայում:—Փաթիզաբնակիչաց հայերու ուղերձը պ. Ջէմս Բրայսին և նորա պատասխանը:

Ախորժելի, զբօսուցիչ և մանաւանդ խրատական ճանապարհորդութիւն անելուց յետոյ իտալական գրաւիչ երկրում՝ վերադարձայ նորից, ինչպէս անցեալ անգամ առեցի, աշխարհս, չքեղ մայրաքաղաքը Ֆրանսիայի:

Այո, որ կողմն էլ գնամ Եւրոպա՝ լուսաւոր ու քաղաքակիրթ աշխարհի, ինչ տեղ էլ լինեմ օտարութեան մէջ, վաղեմի սովորութեանս համեմատ, միշտ կը հաճիմ և կը գերադասեմ գալ և վերադառնալ այս նոր ու անհման Բաբելոնը: Սորա մեծաճոխ, բազմատեսակ և ամեն բանով հարստահարուած առաջադէմ կեանքը, որքան էլ աղմկալից և գուցէ փոթորկալից երևայ, գարձեալ և առաւելապէս ամեն մի անհատին իւր ընտանութեանն ու սովորութիւններին, իւր ձգտումներն ու ղբաղումներին չարմար և ցանկալի անկիւնն ու շրջանը կարող է միշտ շնորհել և գեղեցկապէս վայելել տալ...

Այո, սքանչելի Փարիզը իւր հրաշալի ու զարմանալի կեանքի բոլոր երևոյթներով, իւր պատմական ու ժամանակակից անցքերով, իւր անցեալի ու ներկայի սիրուն ու տգեղ, վսեմ ու խորթ տեսարաններով և մարդկային կենցաղավարութեան ամեն տեսակ ցոյցերով անհամեմատ գեղեցիկ է եղած ամեն բանով և ամենքի համար սիրելի մի բնակատեղի ամեն ժամանակ: Այո, „ժողովուրդներու, ազգերի հիւրընկալ քաղաքը“ միշտ և հանապազ եղակի և լայնածաւալ մի հիւրանոց է եղած կենցաղասէրը, ազատասէրը, գործունեայ և ուսումնասէրը օտարականներուն համար, և ես էլ, որպէս սովոր մի հիւր, վերոտին գտնուելով այս դիւթական երկրում՝ կարող եմ հրճուել և ուրախանալ: Բայց այն որ Փարիզը,որ օտար աշխարհի սքանչելի ու հրապուրիչ տեսարանները, վերջապէս այն որ օտարի արուեստական ու բնական հրաշալիքը յափշտակելով մարդուս մտքն ու հոգին՝ կարող են մոռացնել տալ և գերազատուել հայրենական աղքատ և այն աւերակ խրճիթից, ընտանեկան փոկարար „օջախից“, մշտակարօտ հայրենի երկրից, ուր ամեն մի քայլափոխին, ամեն մի վայրկենին որբ-աղ, մտքիդ, հոգուտ մօտիկ ու մտերիմ ձայները լսելով՝ Թէկուզ կոպիտ ու անշնորհ էլ լինին նոքա, գարձեալ և միշտ աղնուաբոյս արձագանք են ուզում հանդիսանալ այն բազմակարօտ ազգի կենսական ձայնի, այն սիրած ժողովուրդի, որ քո արիւնն ու մարմինն է եղած, քո շունչն ու կենդանութիւնը... „Այնտեղ են քո զօրութեան լուն արմատները..“ ձայնում է օրհնուած և պաշտելի բերանը:

Այնտեղ են, այո, մեր „արմատները“, մեր ամբողջ կեանքի բոլոր Թելերի հանգոյցը: Եւ այսօր որչափ էլ դեգերենք

մենք օտարութեան մէջ, որչափ էլ հաճելենք ու հրճուինք օտարի լուսաւոր, քաղաքակիրթ ու հարուստ կեանքով, որչափ էլ սիրենք ու նախանձենք օտարի ճշմարիտ առաջադիմութեանը և անկեղծօրէն սիրուինք նոցանից՝ առ ժամ մի մոռացութեան տալով մեր պղտոր մտածումները, մի՛թէ դարձեալ անդուլ չը պիտի կրկնենք կարօտակէզ հայ երիտասարդի գեղեցիկ և անուշ խօսքը մեր եղանակով և մեր հասկացողութեամբ՝ թէ,

...“Հալւում եմ, հալւում օտարութեան մէջ,
“Ա՛խ, սիրտս է խորւում, ցաւիս չը կայ վերջ...“

II

Վերադառնալով, ասում եմ, վերոյիշեալ Փարիզ, ինչպէս երևում է, մինչև այժմ բոլորովին զուր տեղը ապատում եմ այստեղից ձեզ գրած ու կորած առաջին նոր նամակիս գըտնուելուն, փոխանակ—ինչ որ էլ պատահի, քանի ժամանակ ունիմ—շարունակելու ձեզ հետ խօսելս ուրիշ նորանոր նամակներով ու յօդուածներով, որոնք՝ ինչքան էլ անբովանդակ, աննշան, չնչին ու փոքրաթիւ էլ լինին, դարձեալ սիրով գրաւելով ձեր ուշադրութիւնը՝ մեևնոյն ժամանակ գիտեմ թէ ինչու չար և վատ նախանձի կիրք են շարժում այն մաղձոտ, սևերես էակները, որոնց բարոյական, մարդավայել ձայնը վազուց արդէն խեղդուելով՝ այլ ևս համարձակութիւն չունին նոքա դէմ առ դէմ խօսելու:

Այո, կարաւ, գնաց, ասում եմ, ինչպէս երևում է, այն նամակս, որ յաջորդելով Կ. Պոլսից վերջին անգամ ձեզ ուղարկած Թղթակցութեանս, շարունակութիւն ևս կարող էր համարուիլ երկարատև Ճանապարհորդութեան նկատողութիւններիս Միջերկրականի ծովեզրեայ այլ և այլ քաղաքների մէջ: Այս քաղաքներում մեր առաջին ուշադրութիւնը հարկաւ հայ գաղթականութիւնները պիտի գրաւէին, ինչպէս որ գրաւեցին էլ:

Այո, «երանելի տեղ»—Կ. Պոլիս չէտոյ, ուր նուաստութիւնս «անգամ ուշադրութեան բան է դառնում և կաթոլիկական խնդրի համար աշխատող կարծուում», մինչև որ մեր վերանորոգէ պայծառափայլ իշխանները՝ չորս հինգ տարի շարունակ “Où est la femme?” կանչելով, դնան վերջապէս նախնի Բիւզանդիոն յաղթական պրօշակներով, իշխանական տօնախմբութեամբ և նեստուին բոլորովին երանց կամքիսոնների դիրկը՝ “voila enfin les femmes!” բացականչելով, այո, «երանելի» Կ. Պոլսից չէտոյ, ասում եմ, պէտք որ տաճկահպատակ հայոց երկրորդ, և գուցէ աւելի դրական ու զարգացեալ, մտաւոր կենդրոնի—Զմիւռնիայի հայ աղգային հաստատութիւնների մասին ևս մի քանի տեղեկութիւններ առնէք: Բացի որանից՝ մի՛թէ հետաքրքիր չէր ձեզ լսել իմ ուղևորիս (sic!) ինչպէս որ բարբառեցին փափկանուն հրեշտակները: Էլ չեմ ասում որ չարմար դէպքից օգուտ քաղելով՝ թոյլ գրչովս նկարագրութիւններ ևս չէի մոռանում անելու ուրիշ բաների հետ և Միջերկրականի վրայ մեզ բըռնող սաստիկ փոթորկի, որ Ճարտար վարպետ—նկարչի շընչատու վրձիններ արժանի տեսարաններ ներկայացնելով՝ ահաբեկ էր անում շատ ուղևորներին:

Եւ այս բոլորը կը կարդայիք դուք այն կորած նամակիս մէջ:

Իսկ այդ տողերին մի՛թէ բնականաբար չը պիտի աւելացնէի նոյնպէս, որ եօթը տարուց չէտոյ այնպիսի բաղձալի սիրով և կարօտով վերադառնալով միշտ ցանկալի Փարիզ, շքեղազարդ մայրաքաղաքը, մեծ հաճութեամբ և ուրախ սրտով մտաբերում էի այստեղ անցրած երիտասարդական առաջին եռանդուն տարիները, երբ ամեն բան այնպէս փայլուն ու վարդագոյն էր երևում, երբ առաջին անգամ (տասը տարի կայ) նամակ Փարիզից փոքրիկ գրութիւնս էի ուղարկում «Մշակին», և այնուհետև ևս՝ նոյն փոքրիկ նամակիս նիւթը ընտրան առնելով՝ մօտ հինգ տարի շարունակ աշխատակցում էի նոյն լրագրի մէջ, որի խմբագրից ևս դեռ այսօր էլ զգալարտութեան ընծաները, որպէս վարձատրութիւն, անխնայ թափվում են գլխիս վրայ, երբ, ասում եմ, ազնիւ բարեկամներիս, սղատամիտ ուսանողներին, մեծանուն պրօֆիլէօրների ընկերութեան մէջ վայելում էի այն անմոռանալի, թանդագին օրերը, որոնք անհատական կեանքիս գեղեցիկ ու փրկարար ժամանակն են կազմում: Մի խօսքով փոքր ու կարճիկ անցեալիս գործունէութեան վրայ ծոռնողական մի աչք գցելով՝ աւելի ուրախ էի և ուրախ եմ, քան թէ տխուր:

Եւ այս բոլորը, որ ուրիշ բան չէ, եթէ ոչ անկեղծ զարթնումն յիշողութիւններիս, առանց մի որևէ յատկութեան, դարձեալ այս հիւրընկալ և սիրելի Փարիզի մէջ, կը յուսայի որ գրաւելով ինձ սիրող նախկին ընթերցողիս ուշադրութիւնը, կարդացուէր այն կորած նամակիս մէջ:

Իսկ տեղիս և առհասարակ Ֆրանսիայի մէջ գտնուած հայ ուսանողների, Փարիզի Հայկազեան ուսումնասիրաց ընկերութեան մասին և ընդհանրապէս Հայագիտութեանը վերաբերեալ նոր երևոյթների և նոր հրատարակութիւնների նկատմամբ, էլ չեմ ասում Փարիզի անհուն և անսպառելի, բազմատեսակ կեանքի վրայ, մանրամասը և կարգով խօսելուց առաջ, մի՛թէ մի տեսակ չառաջաբանի խոստումներ չը պիտի անեի, հետզհետէ և հետևաբար շարելու ձեր առջև այդ բոլորի մասին ասելիքս և այլն...

Եւ այս ամենը, որ...

Մտաբերելով հին պատմութիւնից մի դէպք, երևակը կը կրկնէք դուք, ընդհատելով խօսքս, «Ճառերը (այսինքն կորած նամակը) թղթի վրայ միայն չը պիտի գրէիք, այլ և...»

—Այլ և մտքիս մէջ, այո: Եւ՝ի հարկէ այսպէս խօսելով՝ գուք գոհ կը մնաք, եթէ նորից կրկնեմ այստեղ ոչ թէ յիշողութիւններս, որոնց փոքր ինչ ակնարկելով, այլ ևս աւելորդ եմ համարում մէջ բերել, ոչ թէ զմիւռնիաբնակ և մինա գաղթական կեանքի այլ և այլ երևոյթները, որոնց մասին խօսելու չարմար առիթ միշտ կարող է ներկայանալ, ոչ թէ «կաթոլիկոսական խնդրի համար» առաքելութեանս հետևանքը թէ Կ. Պոլսում, թէ Զմիւռնիայի մէջ և թէ այս տեղ—Փարիզում պ. Օտեանի մօտ, առաքելութիւնն (sic!), ուրի մասին մանրամասը հաշիւ ու համար պիտի տամ, այլ այն մի քանի տեղեկութիւնները Փարիզից, որոնք միշտ նոր երևալով՝ կարգով և հետզհետէ կարող են ենթարկուել ամեն ժամանակ գրչիս գործողութեանը:

III

Ահաւասիկ՝

Անցել էր մի շաբաթ Փարիզ հասնելուցս ի վեր, օր այս քախտաւոր երկրում կարօտն ու հանգիստ առնելուց չէտոյ, առաջին և անհրաժեշտ պարտաւորութիւնս էր դնալ և այցելել տեղիս արևելեան լեզուների դպրոցը, ուր-ինչպէս ամենքին յայտնի է—մեծ հմտութեամբ դասախօսում էր հայոց լեզուն ու մեր գրականութեան պատմութիւնը հանգուցեալ Հայգէտ պրօֆէսօր Եդուարդ Դիւլօրիէն:

Այժմ անշուշտ հետաքրքիր և ցանկալի էր մեզ՝ ամեն-

քիս լմանալ, Թէ ինչ վիճակի մէջ է գտնուում յիշեալ բարձրագոյն դպրոցի հայկական լեզուի ամբիոնը կորստաբեր մահից յետոյ գիտնական հայագէտ պրոֆէսօրի, որ՝ ինձանից աւելի ձեռնհաս և բազմահմուտ մարդկանց ասելով, այնպիսի արժանաւորութեամբ և գիտնական հեղինակութեամբ վարեց հանգուցեալը իւր բեղմնաւոր պաշտօնը քսան տարի շարունակ:

Դպրոցի կառավարիչ պ. Շ. Շէֆֆերին ներկայանալով ես Թէ որպէս „Արձագանքի“ Թղթակից և Թէ որպէս նախկին ուսանող, հարկաւ ճանաչեց ինձ և երկար խօսակցութիւն ունեցանք մենք, որ կարևոր եմ համարում ձեզ ևս հաղորդել համառօտապէս:

Նախ աւելորդ չը լինիլ, կարծեմ, ասել ձեզ, որ պ. Շէֆֆերը Թէ իւր տեսչութեանը յանձնուած արևելեան դպրոցի կողմից և Թէ Academie des inscriptions et Belles—Lettres գիտնական ակումբի անունով, ուր ինքն էլ հանգուցեալ պրոֆէսօր Դիւլօրիէի պէս անդամ է, նորից յիշեցրեց ինձ գոհունակութեամբ, Թէ ինչպէս „Արձագանքի“ խմբագրութեան նախաձեռնութեամբ կատարած հոգեհանգիստը հանգուցեալ հայագէտի մահուան առթիւ մի շատ լաւ տպաւորութիւն գործեց իրանց շրջանում, որի մէջնորդ և Թարգման հանդիսացաւ ինքը, ինչպէս գիտէնք, Թէ մեր և Թէ իրանց տխուր զգացմունքների փոխանակութեան: Մի այսպիսի դէպքի ժամանակ համանման զգացմունքների փոխանակութիւնը և երախտագիտական ցոյցը, գաղէալ մի անգամ մի նոր ապացոյց եղաւ, ինչպէս որ ակնարկում էր և պ. Շէֆֆերը, Թէ մեր արտայայտութեամբ ոչ Թէ անտարբերը, այլ շնորհապարտ ենք լինում դէպի այն հայագէտ և հայասէր եւրոպացիները, որոնք որևիցէ կերպով իրանց մարդասէր կամ գիտնական ուշադրութիւնը չեն զլանում դարձնելու հայերիս վրայ առհասարակ: Եւ այս կողմից, աւելացրեց պ. Շէֆֆերը, մեր հանգուցեալ ընկերակիցը քիչ բան չէ արել մանաւանդ Ֆրանսիացիներիս համար հայագիտութեան նկատմամբ:

Ապա այստեղ շարունակում եմ ես աւելացնել՝ ամփոփելով նորա խօսքերը, որ նշանաւոր, հայագէտ պրոֆէսօրի մահից յետոյ, չը պիտի 'ի հարկէ ենթադրենք, Թէ հայկական լեզուի ամբիոնը բոլորովին Թափուր պիտի Թողնէին: Ինչպէս հանգուցեալ Դիւլօրիէի կենդանութեան ժամանակ, նոյնպէս և այժմ իրանց ձեռքից եկածը չեն խնայում սաքա, որ հայագիտութիւնը Ֆրանսիայում ընդհանրապէս և արևելեան դպրոցում մանաւանդ առաջ գնայ այն ճանապարհով, որով աւանդաբար ընթացել է շնորհիւ գիտնական հայագէտ Ֆրանսիացիների մինչև ներկայ ժամանակս և, յուսով ենք՝ յարեց պ. Շէֆֆերը, այսուհետև ևս [1]:

[1]) Այս խօսքերի ապացոյց կարող է լինել անցեալ անգամ ձեզ հաղորդած արևելեան դպրոցի նոր հրատարակութիւնը «Ստեփաննոս Ասողիկ Տարօնացու ընդհանուր պատմութեան» I հատորը Թարգմանած նախօրօթիւններով հանդերձ հանգուցեալ Դիւլօրիէի ձեռքով: II-րդ հատորը յանձնուած է մեր պրոֆէսորի յաջորդ պ. Ա. Կարիէրէին աւարտելու: Այս աշխատութեանը պ. Թարգմանիչը կ'աւելացնի մի նշանաւոր Ասողիկի պատմութեան և մի համառօտ տեղեկութիւն նոյն պատմութեան և մի համառօտ տեղեկութիւն կը տայ Եդ. Դիւլօրիէի կեանքի և նորա աշխատասիրութեանց վերայ: Երկրորդ և վերջին հատորը լոյս կը տեսնի այս տարի, ինչպէս որ յայտնում է հրատարակիչը: Մնում է մեզ սիրով ողջունել և այս II հատորի երևալուն, որ խոստումիս համաձայն, մանրամասնաբար խօսեմ մատենագրական տեսակէտից հայոց ազգի դէմառը պատմագիրներից ճիկ գործի վերայ:

Եւ ահա այս պատճառով արևելագէտ ու մեհենոյն ժամանակ հայագէտ պ. Ա. Կարիէռ՝ դպրոցիս քարտուղարը, որ Սորբօնի մէջ էս երբայական և ատորական լեզուների դասախօս է, յիշեալ դպրոցի պրոֆէսօրների կառավարչի ընտրութեամբ և հատուկ Թեամբ նշանակուած է հասարակաց կրԹութեան մինիստրից պաշտօնակատար հայկական լեզուի դասախօսութեան:

Դժբախտաբար Ֆրանսիացի ուսանողները (1) հետաքրքիր և հետամուտ չեն հայոց լեզուի ու գրականութեան ուսումնասիրելուն: Եւ այս երևոյթը կարծես ունի իւր երեսացի պատճառները: Նախ մեր մայրենի լեզուն—Թէ գրաբարը և Թէ աշխարհաբարը, ոչ մի տեղ վարչական լեզու չէ, որով արևելագէտ երիտասարդ եւրոպացին՝ իւր ուսումը աւարտելուց յետոյ, կարողանայ շահուիլ և գործ գտնել մանաւանդ արևելքում, ուր մեծ մասամբ հիւպատոսի, փոխ—հիւպատոսի կամ վաճառականի և կամ ուրիշ մի պաշտօն վարելու է լինում կոչուած և ապա քուն գիտնական նպատակով, ինչպէս որ ուսումնասիրում են ռուսկիրիա, պարսիկ, արաբական և արևելեան միւս լեզուները, հայերէնը իւր համեմատ կամ շատ չափաւոր վիճակով չէ ներկայացնում լեզուագիտական և պատմաբանական այնպիսի մի մեծ հարստութիւն, որպիսին շնորհուած է յիշեալ ճոխ լեզուներին և նոցա զեղուն ու բազմատեսակ հին գրականութեանը: Թէև այն էլ չը պէտք է մոռանալ, որ նոյն իսկ այդ հին աղբերի հարստատ անցեալով պարապող եւրոպացի ուսանողները էս շատ քիչ են լինում Թուով: Ընդամենը երեք կամ չորս հոգի յոսում է մի որևէ արևելագէտին:—Ըրնդհանրի նման նշանաւոր գիտնական մարդը, որ տեղիս համալսարանի Collége de France քաժնում եբրայական լեզուի և գրականութեան դասախօսութիւն է անում՝ հազիւ երկու երեք ուսանող ուներ: Բայց ի հարկէ ուսանողների տրամադրութեանը չեն նայում առհասարակ Եւրոպայում, ուր շատ փոքր և աննշան բացառութեամբ, երիտասարդները, ինչպէս և ամեն տեղ, ներկայումս փնտռում են այնպիսի գործնական աշխատութիւն և հետևաբար անմիջական արդիւնք, որ վարձատրէ նոցա աշխատանքը կեանքի ասպարէզում: Անտարակոյս այդ-

[1]) «Արձագանքի» ընթերցողներին անյայտ չէ, կարծեմ, որ անցեալ տարի պ. Գատէրիաս անունով Ֆրանսիացի մի երիտասարդ, Ա-րևելեան դպրոցի ուսումնասիրութեան աշակերտներից մէկը հրատարակեց մի գրքոյկ l'Arménie et les arméniens վերնագրով. «Մասիս» լրագիրը, որ Թարգմանեց իւր ԹերԹերում քաղուածօրէն այդ պատկերազարդ աշխատութիւնը, իրաւամբ նկատել էր, որ երիտասարդ Ֆրանսիացին մի քանի սխալներ է անում մեր պատմութեան և մանաւանդ լեզուի մասին, ասելով Թէ հայերէնը ուսումնասիրելու համար պէտք է անպատճառ վրաց լեզուն գիտենալ և այլն: Ես Թէ չեմ սխալւում «Արձագանքը» էլ խօսեց կարծեմ այդ մասին: Գրքոյկը կամ գիրքը, որ բաղկացած է 141 երեսից in 8-° պատմական մի համառօտ կօմպիլացիայ է (հաւաքագիրը) բաւական յաջող կազմուած հայկական այլ և այլ աղբիւրներից' սկսելով ամենահինից, նախնի ժամանակներից մինչև ներկայ օրերը: Վերջում ունի և մի յաւելուած հայոց կրօնական վարդապետութեան, Լուսաւորչեան Թագաւորների, մխիԹարեաններէ մասին և այլն: Ուրիշ Ֆրանսիացի հայագէտ ես չեմ ճանաչում, բայց մի երկուսից, որոնք հայերէնը սովորել են որպէս օգնական մի առարկայ արևելագիտութեան համար առաւելապէս քրիստոնէութեան առաջին դարերին վերաբերեալ . . . Ը մոռանամ աւելացնել, որ յիշեալ պ. Գատտէրիասի գիրքը, որի շատ տարածուելու վերայ տարակուսում եմ, հրատարակուեցաւ բաւական յարմար ժամանակ, այսինքն երբ օրակարգի հարց դարձաւ Եւրոպայում հայկական խնդիրը . . .

պիսով շատ յետ կը մնար արևելագիտութիւնը ոչ միայն Ֆրանսիայում, այլ և ամբողջ Եւրոպայում: Ուստի և դիտնական աշխարհը իւր հատատութիւններով—ակադեմիաներով, ուսումնական ընկերութիւններով, միջազգային ժողովներով և այլն և այլն և կամ իւրաքանչիւր դիտնական անհատ չիշեալ աշխարհի առանձնապէս, առանց վարանելու, առաջ են տանում ընդհանուր մարդկութեան այն բազմաճիւղ և անսպառելի անցեալի ուսումնասիրութիւնը, որով ծանօթանալով մարդիկ իրանց նախորդների արած բազմադարեան ամեն տեսակ վաստակութեանց՝ օգուտ են քաղում և պիտի քաղեն միշտ նորկայ և ապագայ առաջադէմ կենցաղավարութեան համար: Ահաւասիկ արևելագիտութեան գլխաւոր նպատակներից մէկը:

Եւ ահա այս պատճառով, այս ընդհանուր ատանդաման հոսանքին կամ ուղղութեան հետևելով, Փարիզի արևելեան դպրոցն էլ ուրիշ դասախօսելի առարկաների հետ զանց չէ առնում երբէք և հայագիտութեան ուսումնասիրութիւնը առհասարակ, որ—ինչպէս վերև ասուեցաւ—օրգան էլ իրանց եւրոպացիներին, նոյնչափ և մեզ՝ հայերիս համար անհասկած օգտակար և նպաստաւոր է ամենայն կողմով: Էլ չեմ ասում, որ օտար մարդիկ միշտ աւելի անաչառ տեսակէտից նայելով մեր պատմական անցեալի վերայ, աղատրերը և առանց մի սրևէ կրքի կը յայտնեն իրանց գիտնական սխալ կամ ուղիղ հայեացքները և հետևաբար զարկ կը տան հայոց յառաջադիմութեանը:

Անտարակոյս այս գովելի նպատակին ունէին այստեղ աչքի առջև, որ բացի վերոյիշեալ հրատարակութիւնից Սահակեան Առաղեկի պատմութեան I հատորի և ապա II—րդի, շաբաթեական հայերէն երկու դասից՝ հանգուցեալ Դիւլօրիէի յաջորդ պ. Ա. Կարիէրը այժմ զբաղուած է նոյնպէս յօրինելու մի քերականութիւն հայոց լեզուի փրանսիացիների համար, որոնք մինչև այժմ Պետերման հայագէտի քերականութեան վրայ էին ուսանում հայերէնը: Իսկ այս վերջինը այն անյարմարութիւնն ունի, որ լատիներէնի միջնորդութեամբ է աւանդում հայոց լեզուն, փոխանակ մի որևէ կենդանի և հետևաբար աւելի մատչելի լեզուով աւանդելու մեր գրաբարը օտարներին: Ահա այդ պակասորդը ուզում է լրացնել պ. Կարիէրը իւր հայրենակիցների նկատմամբ:

Քանի որ խօսքս արևելագէտների և հետևաբար հայագէտների (1) վրայ է, վերջացնելով նամակիս այս մասը, չը մոռանամ յայտնել ձեզ, որ այս տարի սեպտեմբեր ամսին Հոլանդիայի Լէյդէ (Leyde) քաղաքում գումարուելու է արևելագէտների միջազգային ժողովը. Պ. Կարիէրին, որպէս Փարիզի Արևելեան դպրոցի քաղտուղարին, յանձնուած լինելով Ֆրանսիայի կողմից չիշեալ ժողովում ներկայացուելու և կարդացուելու պատմական չիշատակարանների օրագրի կազմելը, մեր նոր հայագիտը ոգուտ է գտել՝ մտնելով այդ օրագրի թերթերում և իւր մի նոր աշխատութիւնը—«Արձանագրութիւն (1) հայկական մի տապանակի կամ մատունքի մի տուփի», որ պատմական նշանաւոր մի չիշատակարան է և պատկանում է տասնուերեքերորդ դարու ժամանակներին Կիլիկիայի հայոց:

Թէ այս աշխատութիւնը և թէ վերոյիշեալ քերականութիւնը, երբ ստանամ պ. Կարիէրից իւր խոստման համաձայն, չեմ թողնել ի հարկէ առանց խօսակցութեան առիթայ անելու «Արձագանքիդ» ընթերցողների հետ:

IV

Մեր պատմական անցեալում մի փոքր զբօսնելուց յետոյ՝ վերադառնանք այժմ հայոց նոր կեանքին և մի քանի խօսք էլ սորան նուիրենք:

Անցեալ անգամ լուր տուի ձեզ, թէ Փարիզաբնակ հայերի կողմից մի ուղերձ ներկայացուեցաւ Անգլիայի համայնքների ժողովի անդամ հայասէր պ. Ջէյմս Բրայսին, որ—ինչպէս յայտնի է—միշտ եռանդուն պաշտպան է հանդիսանում տաճկահպատակ հայոց դատին: Ահաւասիկ այդ ուղերձի թարգմանութիւնը և պ. Ջէյմս Բրայսի պատասխանը, որ նորերս ձեռք բերի ես Փարիզաբնակ մեր հայրենակիցներից:

„Տ՛ը,

„Փարիզաբնակ հայերը՝ լսելով Ձեր վեհ խօսքերը, որ „նուիրեցիք դուք տառապեալ և ճնշուած Տաճկահայաստա„տանին համայնքների ժողովում մայիսի 25-ին, չափազանց „խոր զգացուեցան:

„Մենք մեր անունով և մեր չիշեալ ճնշեալ եղբայրների „կողմից մատուցանում ենք Ձեզ, տէր, ամենաջերմ արտա„յայտութեան շնորհակալիքը:

„Արդարութեան իրաւունքի պաշտպանելը որի „անունով լսեցիք Դուք Ձեր ձայնը, արժանի է եղել միշտ „այն վեհանձն Անգլիական ազգին, որ անդադար նախա„ձեռնող է հանդիսացել ամբողջ աշխարհում ընկճուած ժո„ղովուրդների բարօրութեան:

„Թող ներուի մեզ յուսալ, թէ Ձեզ չատուկ այն վե„հանձնութիւնը, որ ցոյց տուիք Դուք Ձեր գործողութեամբ, „որպէս և անգլիական ազգը անցեալում, ապագայի մէջ ևս „կը շարունակուի յօգուտ մեզ. վեհանձնութիւն, որի շնոր„հապարտ զգացման չիշատակը, հաւատացնում ենք Ձեզ, „դրոշմուած կը մնայ մեր բոլոր հայրենակիցաց սրտի խորքում:

„Պատիւ ունենք, տէր, Ձեր ամենախոնարհ և երախ„տապարտ ցարգող լինելու:

Հետևում են հարիւրի չափ ստորագրութիւններ:

Ահա և պ. Ջէյմս Բրայսի պատասխանը՝

„Առ Փարիզաբնակ հայերը

„Պարոնները

„Ստացայ Ձեր նամակը և շտապում եմ յայտնել Ձեզ „անկեղծ շնորհակալութիւնս այն ամենազնիւ զգացմանց „համար, որ արտայայտում էք այնքան ջերմութեամբ:

„Շատ զգացուեցայ և մեծապէս վարձատրուած զգայ „ինձ, կարդալով Ձեր երախտագիտութեան արտայայտու„թիւնը այն տկար ճգանց համար, որ ցոյց տուի ես յօգուտ

---

1) Քաջ յայտնի լինելով հայ ընթերցողներին մեր հայրենակից Գեղովքէ Պատկանեան արևելագէտ պրօֆէսօրի անունը, որ երբեմն վայելում է այժմ Եւրոպայում հմուտ և ձեռնհաս հայագէտի հեղինակութիւնը, նոյնպէս և անծանօթ չը լինելով մերոց Մկրտիչ Էմինի համբաւը, բացի վերոյիշածներից, ահաւասիկ ներկայումս ապրող այն եւրոպացի հայագէտների անունները, որոնք ինձ յայտնի են, պ. Պօլ դը Գարդ—Գէօտինգէնի մէջ, պ. Հիւբշման—Մարսբուրգում, պ. Լաուէր—Մէրսբուրգի մէջ, պ. Սալեման—Պետերբուրգում և Ջախաու—Բեռլինի մէջ: Ձեմ հաշուում այն արևելագէտներին, որոնք—ինչպէս ասեցի—հայերէնը ուսումնասիրել են որպէս օժնական մի առարկայ: Այս վերջիններից կարող է համարուել և Հայդելբէրգի պրօֆէսօր պ. Մէրկս, որի հետ բախտ ունեցայ ծանօթանալ—Վենետիկում:

1) Inscriptions d'un reliquaire arménien de la collection Basilewski publiées et traduites par A. Carrière

„Հայկական դատին՝ հրաւիրելով անգլիական Խորհրդարանի „(Parlement) և նախարարներուն ուշադրութիւնը հայոց տա„ռապանքներուն և արժանեաց վերայ։

„Մայիսի 25-ի վիճաբանութիւնները հետևեալ ար„դիւնքն ունեցան։ Անգլիական կառավարութիւնը ճանաչեց „բացայայտօրէն այն պարտաւորութիւնները, որ ունին Բեռ„լինի դաշնագիրը ստորագրող վեց պետութիւնք վերաբեր„մամբ հայոց և խոստացաւ, թէ ոչ մի ջանք չի պիտի զլա„ցուի Անգլիայէն կողմից ձեռք բերելու 61 րդ յօդուածի գոր„ծադրութիւնը։

„Կասկածելի է, որ Թուրք կառավարութիւնը կատարէ „որ և է իրական բարենորոգումն, որ պէտք եղած դարմանը „կարողանայ բերել Ձեր տառապանքներին։ Անցեալ փորձա„ռութիւնները նոյնպէս շատ յուսատու խրախոյս չեն տա„լիս։ Հայէ յատկութիւնները, իւր բարոյական ու մտաւոր „կորովը, իւր աշխատասիրութիւնը, իւր պարտաճանաչու„թեան ղգացումները, իւր համբերութիւնն ու տոկու„նութիւնը պէտք է բարձրացնեն իրան աւելի և աւելի ևս „վեր ջրջապատող մահմէտական ցեղերից։ Թուք որ օտար երկրի „մէջ պահպանում էք Ձեր հայրենիքի յիշատակը, շատ „լաւ գիտէք, թէ Ձեր կողմն է քաղաքակրթութեան ոգին։

„Ընդունեցէք, պարոններ, կրկին շնորհակալութիւն„ներս Ձեր ազնիւ ղգացմանց համար և ջերմագին մաղ„թանքներս Ձեր ազգի ապագայի համար։

Մնամ Ձեզ անչնաչէր Ջ. Բրայս

Յարոյց

ՄԵԾ-ՂԱՐԱՔԻԼԻՍՈՒ ԳՈՐԳԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ

Ո՞վ էր Փամբակում առաջին անգամ գորգ գործելու արհեստը մտցնողը. ներկայումս այս արհեստը ինչ դրութեան մէջ է, ինչ միջոցով կարելի է աւելի արագ քայլերով առաջ տանել այս նշանաւոր արհեստի կատարելագործութիւնը։

Պարերի ընթացքում ժողովրդի խաւերից ժամանակը շատ անգամ ծնեցնում է նշանաւոր երևոյթներ. բայց որովհետև ժողովուրդը լինքը ընդհանուր առմամբ դեռ այժմ էլ համարեա թէ գրաւած չէ մեր լուսաւորած դասի հարկաւոր ուշադրութիւնը, այն էլ սորանից մի քանի տասնեակ տարիներ առաջ այս պատճառով աւելի ևս անյայտութեան մէջ են մնում նորա մէջ ծնունդ առնող երևոյթները։ Ում պատահել է գիւղերում ճանապարհորդել, նա անշուշտ գիւզացիների հետ խօսակցութեան ժամանակ անդադար լսած կը լինի այս ինչ կամ այն ինչ նշանաւոր մարդի կեանքի և գործունէութեան մասին հետաքրքիր տեղեկութիւններ։ Այսպիսի դէպքում հետաքրքիր լսողը թէ և շատ ցաւում է, որ այն մարդիքը, որոնց մասին հետագայ սերունդը երախտագիտական զգացմունքով լի զարդարած պատմութիւններ է անում՝ այլ ևս չը կան, բայց ուշ է. ժամանակը իւր բեռածը իւր հետ էլ տարել է. նորա անյայտութեան մէջ ծնուել, անյայտութեան մէջ էլ մեռել են ա„նանց կարողանալու իրանց ցոյց տալ աշխարհին. սակայն այսպիսիների մէջ պատահում են այնպիսի հանճարներ, որոնք եթէ լոյս աշխարհ մանէին, վստահութեամբ կարելի է ասել, որ նորա կարող էին ընթացիկ կեանքի մէջ մեծ դեր խաղալ, եթէ չասենք թէ կարող էին ընթացիկ կեանքի առաջնորդը լինել։ Ցոյց տալու համար թէ արդարև ժողովրդական կեանքի մէջ եղել են և դեռ կան անյայտ հանճարներ, անմշակ ջանքերը, օրինակները շատ կարելի էր բերել, սակայն ընդարձակուելուց մեր իսկական նպատակից չը շեղուելու համար բաւականանում ենք մի մասնաւոր օրինակով, որ այս անգամ իգական սեռից է, այն է համառօտ կերպով ծանօթացնել ընթերցող հասարակութեանը թէ՝ ո՞վ էր փամբակում առաջին անգամ գորգ գործելու արհեստը մտցնողը, թէ՝ ներկայումս այս արհեստը ինչ դրութեան մէջ է և թէ՝ ինչ միջոցով կարելի է աւելի արագ քայլերով առաջ տանել այս նշանաւոր արհեստի կանոնաւոր կատարելագործութիւնը։

Ա.

Գորգ գործել փամբակում և շրջակայ տեղերում տարածուել է մեծ Ղարաքիլիսայ, մօտաւորապէս 46 Թուականներում և իւր ծագումը առել է շատ հասարակ կերպով, ինչպէս ստուգեցի նոյն իսկ նախկին վարպետուհուց, որ դեռ ևս կենդանի է մօտաւորապէս 80 տարեկան հասակում։ Իսկ սկզբնաւորութիւնը հասնում է մօտաւորապէս 19 Թուականին։ Այս ժամանակներում մէկ կին պարծենալիս է եղել կապերտ գործելու մէջ իւր ունեցած հմտութեամբը, մի ուրիշն էլ, որ բառական „եզանով“ (հաճարեղ, հնարագիտ, հմուտ) կին է եղել, տեսնելով որ այդ կնոջ սնապարծութիւնը չափից անցնում է, համեստութեամբ ասում է նրան, որ ինքն էլ կարող է գորգ գործել։ Թ,և այս արհեստը մինչև այդ ժամանակ մեզանում չը կար և այդ կինն էլ գործելը չը գիտէր, բայց հարուստների մօտ միշտ եղել են գորգերը, բոլորն էլ Թիֆլիզից, կամ Թիֆլիզի հետ յարաբերութիւն ունեցող առևտրականներից և կամ թէ մասնաւոր մարդերից առնուած։ Այս համեստ „եզանով“ կինը Սանահեանների հարսն է լինում, Մեծ-Պարնի գիւղից։ Տիկին Սանահանը ասում է, և ճշմարիտ, բառական չարչարուելուց յետոյ իւր մօտ եղած մի գորգի նայելով յաջողացնում է նրբա նման մի ուրիշը գործել։ Բայց հետևեալ գործելը վերջացնում է, Սանահեաններին ընտանիքը գաղթում է Երևան, որով և Մեծ-Ղարաքիլիսում գորգ գործելու արհեստ ստեղծողը և նորա առաջին անգամ գործած գորգը գնում են Երևան և Ղարաքիլիսեցիներից ոչ ոք չի կարողանում այն ըստեղծագործ կնոջ մօտ աշակերտելով սովորել այս գեղեցիկ արհեստը։ Ուրեմն այս առաջին փորձը անյաջող անցաւ Մեծ-Ղարաքիլիսու համար. անյաջող անցաւ և Երևանի համար, որով հետև այժմ Երևանում գորգ չեն գործում, հետևաբար կամ տիկին Սանահեանը Երևան գնալուց յետոյ շուտով մեռել է, կամ թէ գորգի համար յարմար թել մանել, ներկել և գորգ հիւսել չի իմացել և ժամանակի ընթացքում ինքն էլ ձերանալով այս արհեստն էլ այնտեղ մոռացութեան է տուել և նորա մեռնելու հետ մեռել է և նորա ստեղծած արհեստը։ Մեծ-Ղարաքիլիսում տիկին Սանահեանի ձեռքով գործված առաջին գորգից յետոյ անցնում է 27 տարի, Մադոնց Մադդաղը (Մադդաղինէ) վերև յիշած 80 ամեայ ծեր վարպետուհին, որ 15 տարեկան հասակում, դեռ ևս աղջիկ ժամանակ Սանահեաններին հարսի գորգ գործելու միջոցին միքանի անգամ գնացած է եղել նորա տունը և հեռուից տեսել է թէ՝ ինչպէս են գործում գորգը; իւր 42 տարեկան հասակում, 46 Թուականին, պատահմամբ առնում է գեղեցիկ գոյներով ներկուած թելերը և մտաբերելով թէ ինչպէս Սանահեաններին հարսը չարչարուելով կարողանում է գորգ գործել, ինքն էլ մտածում է նոյնն անել. վերցնում է մի գորգ և երկար վրան նայելուց յետոյ արհեստի գաղտնիքն

լմանում է և իւր տոկուն աշխատութեամբ ու բնածին հըմտութեամբ հասնում է նպատակին իւր Շահզատ, Բիկզատ, Մարիամ և Գիւլլիզար աղջիկներին աշխատակցութեամբ: Այս երկրորդ փորձը առաջինի պէս առանց հետևանքի չի մնում. ժամանակին յայտնի կապերտ գործող կանայքը երբ տեսնում են, որ Մադոնց Մագդաղն էլ կարողացաւ գորգ գործել, բոլորն էլ դիմում են նորան և խնդրում են, որ գնայ իրանց համար էլ գորգ հինի և գործելը սովորեցնի: Կարճ մէջոցում գիւղումը տարածվում է այս արհեստը, որը որքան գեղեցիկ է, նոյնքան էլ հեշտ է գործել. բաւական է միայն ուշադրութեամբ հետևել վարպետուհու մէկ երկու շարք գործելուն, այնուհետև կարելի է օրինակին նայելով գործել շատ քիչ անգամ դիմելով վարպետուհու օգնութեանը: Ես ինքս այս փորձել եմ և տեսել որ հեշտ է և շատ հեշտ է: Մադոնց Մագդաղը այնուհետև մեծ հեղինակութիւն և համբաւ է ստանում թէ Ղարաքիլիսու և թէ ամբողջ Փամբակու կանանց մէջ և այսօր, առանց չափազանցութեան կարելի է ասել, որ քիչ փամբակեցիները կը գտնուին, որոնք չը Ճանաչէին Մադոնց Մագդաղին. շրջակայ տեղերից էլ, մանաւանդ Լօռում շատ շատերը յարգանքով չեշում են Մադոնց Մագդաղի անունը և „եզանը“ գորդ գործելու արհեստի մէջ:

Մագդաղի գործուած առաջին գորգը, կամ ինչպէս ժողովուրդը անուանում է, „խհմըհանուկը“ մինչև այսօր էլ կենում է Գէորգ Աբուլեանի տանը. որքան աշխատեցի այս գորգը ստանալ նոցանից, չը յաջողեցայ: Բաւական հըննացել է. եթէ ինչպէս այժմ են պահում, շարունակեն էլի այնպէս պահել, մի հինգ—վեց տարուց յետոյ այս Թանկագին „խըմըհանուկը“ գուցէ այլ ևս գոյութիւն չի ունենալ և շատ ուրիշ հնութիւնների պէս այս էլ մաշող Ճանկերի զոհ կերթայ: Ես աշխատում եմ և գործէալ կաշխատեմ, որ այս հնութիւնը ազատեմ մաշող Ճանկերից: Ցանկալի կը լինէր, որ Սանահեանների Երևան տարած գորգն էլ որ „Նախա—խըմըհանուկն“ է, ձեռք բերվէր և պահվէր իբրև հնութիւն: Բայց արդեօք, այստեղից Երևան գնացող Սանահեանները այժմ էլ կան և թէ ոչ „Նախա—խըմըհանուկ“ գորգն էլ կենդում է թէ ոչ: Մադդաղին երկրորդ գործը մէկ աստիճանաւորի գորգ կարկատելն է, որի համար ստացել երեք ոսկի (երեք ծակի համար), այնքան կարկատանը աննկատելի է եղել հին գործուածքից, իսկ միւս գորգերը, որոնք նորա օգնութեամբ գործուել են թէ իրանց, թէ մեր և թէ ուրիշ բարեկամների և հարևանների տներում բոլորն էլ կենում են: Այս բոլորի վերայ նայելով շատ գեղեցիկ երևում է գորգագործութեան աստիճանաբար կատարելագործվելը. բայց պէտք է խոստովանել, որ Մադդաղի „խըմըհանուկը“ իբրև առաջին գործ համեմատելով մեա՝ հետագայ գործված գորգերի գործվածքի նրբութեան և գոյների յարմարութեանհետ, այն աւելի բարձր է:

Բ.

Գորգագործութիւնը իւր սկզբնաւորութիւնից մինչև այսօր առաջ է գնացել բոլորովին ինքնաբերաբար, անգիտակցաբար. ոչ ոք այս արհեստի ծագման համար չէ մտածել. ուրիշ տեղերից աւելի գեղեցիկ ձևերով և ծաղիկներով նուրբ Ճաշակով գործուած գորգեր բերել տալու համար ոչ ոք գիտակցաբար չի աշխատել, որոնցից օրինակելով կարելի լինէր արհեստի կատարելագործութեանը նշանաւոր զարկ տալ: Բայց եթէ այսօր Մեծ-Ղարաքիլիսան պարծենում է իւր գեղեցիկ գորգերով, դրանով պարտական է իւր աշխարհագրական դիրքին միայն, ուրիշ ոչ ոքի: Մեծ-Ղարաքիլիսան իւր յարմարաւոր դիրքի պատճառով ունի մշտական զօրք, զանազան կարգի աստիճանաւորներ, թէ զինուորական և թէ քաղաքական: Ամառը գալիս են այստեղ բաւականաթիւ հիւրեր թէ Ալէքսանդրապօլից, թէ Երևանից և թէ մինչև անգամ երբեմն էլ Թիֆլիզից: Այս եկաւորներից շատերը երանց հետ բերում են լաւ լաւ գորգեր թէ եւրոպական և թէ ասիական Ճաշակով գործուած: Սոցա մօտ տեսնում Ղարաքիլիսեցի կինն վարպետուհին այս գորգերը և հաւանելով վերցնում օրինակում է նոցանից: Նախկին մօվրօվներից սկսած որքան գաւառապետի օգնականներ, հաշտարար դատաւորներ, անտառապետներ, բազմաթիւ զինուորական սպայներ են եկել այստեղ հետզհետէ, այս բոլորն էլ երանց կարգում նպատակ են Մեծ-Ղարաքիլիսու գորգագործութեան արհեստի զարգացմանը երանց բերած զանազան տեսակ գորգերով: Եթէ Մեծ-Ղարաքիլիսան Սանահեանների հարսի պէս շատ ընդունակ հարսներով և Մադոնց Մադդաղի պէս շատ „եզանով“ կանանց հետ միասին լինէր այնպիսի տեղում, ինչպիսին է օչնակ եաղուբլին կամ Սարմսախլին և կամ թէ Հաջի աղարան, այն ժամանակ Մեծ-Ղարաքիլիսան այն չէը լինել, ինչ որ այսօր է ամենայն կողմից էլ: Բայց, կրկնում եմ, ոչ ոք գիտակցաբար չի աշխատել այս նշանաւոր արհեստի կանոնաւոր զարգացման համար: Այսօր էլ մեր գորգագործութիւնը այս խախուտ Ճանապարհի վրայով է առաջ գնում: Եթէ այսուհետև մեզանում եղած աստիճանաւորները երկար ժամանակ չը փոխվին, երկար ժամանակ էլ մեր գորգագործութեան տեսակների մէջ նորաձևութիւններ չեն մտնիլ, երկար ժամանակ, եղածներից աւելի նուրբ, աղնիւ Ճաշակով գործուած գորգեր չենք ունենալ: Ապա ուրեմն ինչ պէտք է անենք, որով մեր գորգագործութիւնը խախուտ Ճանապարհից վերցրած լինէինք և մի հիմնաւոր ուղղութիւն տուած լինէինք նորան, որով և կարողանայինք գիտակցաբար առաջ տանել մեր այս մինակ պարծանք գորգագործութիւնը:

Գ.

Այս հարցից օգուտ քաղելով աւելորդ չէը լինիլ, եթէ ընթերցող հասարակութիւնը ծանօթացնէինք երկու թղթակցութեան հետ, որոնք հրատարակուեցան այս տարի „Պսակ“ շաբաթաթերթի յունուար ամսուայ համարներում (?): Սոցանից առաջինը գրել էր Պ. Յովհաննէս Հէթումը. Պ.'ի նկատի ունենալով այն հանգամանքը որ գորգագործութիւնը միայն այստեղ, Մեծ-Ղարաքիլիսումն է աւելի կատարելագործուած, առաջարկում էր փոխանակ եւրոպական ձեռագործերի, տեղիս օրիորդական դպրոցում գլխաւոր տեղ տալ գորգ գործելու արհեստին, որպէս զի այստեղից դուրս եկած վարպետուհիների ձեռքով և ուրիշ տեղեր տարածուի այս գեղեցիկ արհեստը: Յօդուածի գլխաւոր միտքը այս էր. մանրամասնութիւնները չեմ յիշում: Երկրորդ թղթակցութիւնը, որ առարկութիւն էր Յովհաննէս—Հէթումի դէմ, գրել էր տեղիս երկսեռ դպրոցների Հայերէնի ուսուցիչ պ. Սարիբէկ Տէր-Մելքիսեդեկեանը: Վստահանում եմ յայտնել մի այսպիսի կարծիք, որ եթէ մեր վարժուհին—տիկին Փէփրոնիա Տէր-Մելքիսեդեկեանը Պ. Սարիբէկի կինը չը լինէր, նա անշուշտ կը համաձայնէր պ. Յովհաննէս—Հէթումի հետ, և ինչպէս իւր առարկութեան մէջ ասում էր, „մեր աղնիւ բարեկամը խաբուել է իրան լուրեր հաղորդողներից“, այն ժամանակ էլ կասէր թէ՝ „մեր աղնիւ բարեկամի առաջարկութիւնը շատ գեղեցիկ է“ և կաշխատէր իրագործել՝ մա-

նաւանդ եթէ տիկին Տէր-Մելքիսեդեկեանը գորդ գործելը իմանար: Պարոնի առարկութիւնը հետևեալն էր մօտաւորապէս, թէ՝ „մեր օլխորդները բոլորն էլ գորդ գործել գիտեն, նոքա տներումն են սովորում, ուրեմն աւելորդ է այս արհեստին ձեռագործութեան մէջ տեղ (այն էլ գլխաւոր տեղ) տալ“: Ճշմարիտ է, մեր Ղարաքլիսեցի աղջիկները շատ քիչ բացառութեամբ բոլորն էլ գորդ գործել գիտեն, բայց այն էլ ճշմարիտ է, որ նոքա բոլորն էլ ընդօրինակողներ են և ոչ վարպետներ, և այսպիսիները անյարմար են, անընդունակ են իրագործելու այն նպատակը ինչ որ ցանկանում ենք պ. Յ. Հէթումը և ես. և քանի որ մեր գորգ գործողները ընդօրինակողներ են, մեր գորգագործութիւնը մի՛շտ կաղ կաղ առաջ կերթայ, անգիտակցաբար և խախուտ ճանապարհի վերայ. բայց եթէ գորգագործութիւնը մեր օրիորդական դպրոցի ձեռագործութեան մէջ մեծ տեղ բռնեց այն ժամանակ և գորգագործութիւնը գիտակցաբար առաջ կերթայ, և մենք կարող կը լինենք ուրիշ տեղերին գորգ գործող վարպետ վարժուհիներ տալ և մինչև անգամ պանապան տեղերից ուսուցչուհիներ օրիորդները կուզարկուին այստեղ ուսուցչութեան այս արհեստը և թէ նոյն իսկ վարժուհիները նոյն նպատակով ժամանակ առ ժամանակ կայցելեն մեր օրիորդական դպրոցը: Իսկ այս հանգամանքից պարզ յայտնի է, թէ ինչ ծառայութիւն արած կը լինինք և Ղարաքլիսին, և փամբակին և թէ ուրիշ տեղերին:

Եթէ մեր ձայնը միանալով պ. Յովհաննէս—Հէթումի ձայնի հետ և երկուսինս միասին կարողացան արձագանգ գտնել մեր հոգաբարձուների մէջ, այն ժամանակ մենք մեր նպատակին հասած կը լինենք և վարձատրուած:

1883, յունիսի 30 Մեծ-Ղարաքլիսայ:

Կիւլիւ

Խմբագիր-Հրատարակիչ ԱՐԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՅԱՒԱՋԻԿԱՅ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՍՑ ՀԱՄԱՐ

ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

Գտնվում է ի միջի այլոց հետևեալ դասագրքերի պահեստը (բացառապէս)

Հայոց լեզուից՝

1. Տէր-Ղևոնդեանց՝ Մայրենի լեզու, ա. տ 9. տիպ. 35 կ.
2. » Մայրենի լեզու, բ. տ, 7-դ տիպ. փոփոխած և զանազան արձակ ու չափաբերական գրուածներով լրացրած: 40 կ.
3. » Մայրենի լեզու, գ. և դ. տարի, 4-դ տիպ. արմատականապէս փոփոխած և կազմած ազգային ներքին կեանքից և պատմական անցքերից առնուած յօդուածներով, որոնք քաղուած են Հայ Հեղինակների երկասիրութիւններից: . . . . 70 կ.
4. » Մայրենի լեզուի քերականութեան տարրքը, երկրորդ և մասամբ երրորդ տարուայ ուսուցման նիւթը . . . . . 30 կ.
5. Ագայեանց՝ Ուսումն մայրենի լեզուի, ա. տ. 5-դ. տիպ. փոփոխած և զանազան ընտիր յօդուածներով լրացրած . . . 25 կ.
6. » Ուսումն մայրենի լեզուի, բ. և գ. տարի, նոր հրատարակութիւն. դասագիրք ընթերցանութեան ազգային ուսումնարանների համար . . . . . 45 կ.
7. Մանդինեանց՝ Ընտանեկան աշխարհ, ժողովրդական բանաստեղծութեան հատուածներով և այբբենարան առաջին տարուայ ուսմունք և ընթերցմունք . . . . 25 կ.
8. » Ազգային դիւցազնական աշխարհ.-Սասունցի Դաւիթ վամ Մհերի դուռը. երկրորդ տարուայ ուսմունք և ընթերցմունք, երկրորդ տարուայ . . . . . 30 կ.
9. » Նահապետական և Հայրենի աշխարհ. գ. տարուայ ուսմունք և ընթերցմունք. գ. տիպ. . . . . 65 կ.
10. Կոստանեանց՝ Գրաբարի հոլովումը. . . . . 15 կ.
11. » Գրաբարի խոնարհումը. . . . . 25 կ.
12. » Ծաղկաքաղ—ընթերցարան գրաբար լեզուի, մ. ա. . . . . 25 կ.
13. » Նոյն մասն երկրորդ . . . . . 60 կ.
14. » Նոյն մասն երրորդ . . . . . 40 կ.
15. Այվազեան՝ Նախակրթանք գրաբար լեզուի . 35 կ.
16. Եղիշէ՝ Պատմութիւն Վարդանանց . . . 80 կ.
17. Նազարեանց՝ Հայոց լեզուի ուսուցիչ. երրորդ տարի . . . . . 40 կ.

Ռուսաց լեզուից՝

18. Ռուսերէն ամենատեսակ դասագրքեր:
19. Տէր-Դաւթեան՝ «Русское Слово» վեցերորդ տիպ. փոփոխած, նորանոր վարժութիւններով դիւրացրած լեզուի ուսումը և գեղագրութեան օրինակներով լրացրած . . . . . 50 կ.

Թուաբանութիւնից՝

20. Հէնչէլի՝ Բանաւոր և գրաւոր հաշուելու խնդիրներ, ա. և բ. տարի . . . 40 կ.
21. Գ. Բ. և Պ.՝ Թուաբանական խնդիրների ժողովածու սիստէմատիքական դասընթացք —ամբողջ թուեր (նոր տպագրութիւն) » »
22. Մանդինեանց՝ Կեանքի հանգամանքների համեմատ թուաբանութիւն . . . . . 70 կ.
23. Վարձելեան՝ Դասագիրք թուաբանութեան . 75 կ.

Կ ր օ ն ա գ ի տ ու թ ի ւ ն

24. Տէր-Ստեփանեանց՝ Սկզբունք քրիստոնէական Հաւատոյ՝ գ. տիպ. պատկերազարդ՝ . . 50 կ.
25. Հայոցդի՝ Սրբազան պատմութիւն հին-կտակարանի, պատկերազարդ տպագրութիւն՝ Ծայրագոյն Հոգևոր իշխանութեան հրամանով տպագրուած . . . . . 50 կ.
26. » Սրբազան պատմութիւն նոր կտակարանի՝ պատկերազարդ տպագրութիւն . 50 կ.

ՅԱՌԱՋԻԿԱՅ $18^{83}/_{84}$ Թ. (ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ)

„ՎԱՐԺԱՐԱՆ“

Մանկավարժական ամսագիրը կը հրատարակուի նոյն դիրքով, նոյն ուղղութեամբ, նոյն ծրագրով և նոյն աշխատակիցների գործակցութեամբ։

Ա մ ս ա գ ր ի ս ծ ր ա գ ի ր ը

ա. Ազգիս վեհափառ Հայրապետի և Թեմական վեր-ադասուչների կարգադրութիւնները ազգային ուսումնարանների վերաբերութեամբ։

բ. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԲԱԺԻՆ—յօդուածները մանկավարժական քովանդակութեամբ։

գ. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԲԱԺԻՆ—յօդուածները ազգային պատմութեան, աշխարհագրութեան, գրականութեան, տոհմագրութեան և լեզուի վերաբերութեամբ։

դ. ՄԱՏԵՆ, ԱԽՕՍՈՒԹԻՒՆ—քննական յօդուածները դասագրքերի և մանկական ընթերցանութեան գրքերի։

ե. ԱՅԼ ԵՒ ԱՅԼ—զանազան տեղեկութիւնները ուսումնարանական կեանքից։

զ. ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱԺԻՆ—վէպեր, զրոյցներ և այլն, մանկական ընթերցանութեան համար։

է. Հանելուկներ, խնդիրներ և խաղեր մանկանց համար։

ը. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

Բաժանորդների թիւը աւելանալուն պէս, ամսագրի շրջանը կընդլայնենք։

Տարեկան բաժանորդագինն է 5 րուբլի։ Սակայն խմբագրութիւնս ի նկատի առնելով ուսուցիչների և առ հասարակ ազգային պաշտօնեաների մեծ մասի նիւթական անապահով դրութիւնը, և դոցա գործը դիւրացնելու համար որոշել է, որ նոքա ստորագրուելիս մինչև Օգոստոսի 15-ը վճարեն 2 րուբլի. Նոյեմբերին 2 ր. և Փետրուարին 1 ր.

Տարին սկսվում է Օգոստոսին և վերջանում Մայիսին, տարին հրատարակելով տասը տետրակ։

Թիֆլիզում ստորագրուել կարելի է Խմբագրատանը (Երևանեան հրապարակ, ռուսաց սեմինարիայի հանդէպ, տուն № 20 Մ[իր]իմանեանցի) և պ. Եփրեմ Ծատուրեանի լամպային մագազինում։ Օտարաքաղաքացիք դիմում են այս հասցէով՝ Въ Тифлисъ, Въ Редакцію педагогическаго журнала „Варжаранъ“. Эриванская площадь, противъ русской Семинарій, № 20 домъ Мириманова *իսկ արտասահմանից՝* Tiflis (Caucase), Rédaction du journal pédagogique „Yarjaran“.

Խմբագիր-Հրատարակիչ՝ ՆԻԿՈՂԱՅՈՍ ԽՈՍՐՈՎԵԱՆ։

Դուրս եկաւ Մոսկվայում մամուլի տակից Հայոց Օրբէլեանց իշխանների պատմութիւնը ռուսաց լեզուաւ այս վերնագրով История князей Орбельянъ. *գինն է 1 րուբլի. Ծախվում է Թիֆլիզի կենդրոնական գրավաճառանոցում և հեղինակի մօտ, որի հասցէն այս՝ է.* Москва, Лазаревскій Институтъ Христофору Ив. Іоаннесову.

3—2

ԹԻՖԼԻԶԻ ՀԱՅՑԵՐԷՆ ԳՐՔԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Հրատարակութեամբ լոյս տեսաւ և վաճառվում է Թիֆլիզի հայ-գրավաճառների մօտ ընտիր մատենագիրք՝

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

524 *երեսից բաղկացած։ Գինն է 1 րուբլի։ Օտարաքաղաքացիք կարող են դիմել նաև Վարչութեանս գրասենեակը այս հասցէով՝* Въ Правленіе Тифлисскаго Общества Изданія Армянскихъ книгъ. Фрейлинская улица, домъ С. Корганова, № 4։

Дозв. Ценз. Тифлисъ, 16 Іюля 1883 г.
Типографія И. Мартиросіанца.